I-406

1883 ԵՐԵՄԱՆԱՄԵԱԿ 1912

ՍԱՂՄՈՍ

№ 1 XXX ՅՈՒԽՆԻՍ XXX 1912

Ընկերասէր ծիտը . . . . . Ժիրայր Խաչատեանց
Սիրիկի աղօթքը (2 նկարով) . . Զարուհի
Ճպուռն ու ուղտը (ոտանաւոր) . . Պետրոս Մոճառեան
Ես տիկին ունեմ . . . . . Յ. Սօլօվեան
Նոր տարւայ աղջիկը . . . . . Պատկեր
Նոր տարւայ նախընթաց գիշերը (Անդերսէնից) . . . . . օր. Մարգարիտ Թումանեան
Նոր տարւայ երազ . . . . . Պատկեր
Փափախչի Աթնի պատմութը . . Յ. Ադաթար
Շահ-Աբբասի կեանքից (հէքիաթ) . Սղամալ Քալանթարեան
Տեղագրական նամականի, Զանգեզուր. Նիկ. վ. Տ-Աւետիքեան
Տաքիւ . . . . . Պատկեր
Գորիս . . . . . Պատկեր
Նապոն . . . . . Պատկեր
** (Նապոնից բանաստեղծ). . . Զ. Բալուեան

Փ ե լ ի ե տ օ ն

Այծի արկածները (9 պատկերով) . Յար. Թումանեան

Մանկական Աշխարհ

Երեսնամեակ Ազբիւրի . . . . Սմբիկ
Այն ձի է լալիս (բանաստեղծ) . . Վարսիկ
Անբախտ Գրպոն (հէքիաթ) . . Յարութ. Թաւաթալեան

Մեր Թղթակիցները

Նամակ խմբագրին, Հանելուկներ . . . . Վարդան Մամիկոնեան
Խեղճ Ծոլակը . . . . . Զարուհի Մամիկոնեան

Յ Ա Խ Ե Լ Խ Ա Ծ Ն Ե Ր

I

Տօքի և Մաքի, Յր. Հոֆմանի. Թարգմ. Գէորգ Բաբթուդարեան

II

Մանկական Թատրոն

Գարրիչուկ, Ֆլէրիա 2 գործ. . . Ալ. Արեւեան

Ս Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ի Ց

Յաւելուածները ստանում են և 2 ր. բաժանորդագրին վճարող դպրոցական աշակերտները։

Պետական-Օրացոյց. 1912 թ. գինը 50 կ., դպրոցական աշակերտների համար 20 կ.։

Լոյս տեսան Առողջապահիկի եւ Տարազի յունուարի №№-ը։

XXX ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ XXX

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեսունեւերորդ տարի 1912 № 1 Յունուար

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

ԸՆԿԵՐԱՍԷՐ ԾԻՏԸ

Մենք միշտ հաւերը շատ ենք սիրում, որոնց ես եմ կերակրում: Մի անգամ երբ գնացի հաւերին կուտ տալի, ահա այդ ժամանակ մի ծիտ թռաւ եկաւ և եկաւ թէ չէ սկսեց ոչ թէ ուտել, այլ հատիկներից մէկ-մէկ վերցնում էր շտապ-շտապ ու տանում պահում մօտիկ ընկած գերանի տակ հաւերից ծածուկ: Եւ նա այդպէս արաւ, մինչև որ այլևս առնելու բան չը մնաց:

Յետոյ երբ հաւերը հեռացան, ծիտն էլ թռաւ գնաց, բայց իսկոյն վերադարձաւ մի խումբ ծտերի հետ, որոնք սկսեցին ուտել իրանց ընկերի պահած հատիկները.

Ժիրայր Խարազեանց

Թ. ը. դպր. փ. պատրաստ. աշակերտ

ՍԻՐԻԿԻ ԱՂՕՐՔԸ

Սիրիկը կայտառ, չքնաղ մի փոքրիկ աղջիկ էր։ Ծնողները շատ հարուստ էին։ Սիրիկի համար թէ տիկնիկները և թէ ամեն տեսակ խաղալիքներ էին միշտ առնում։ Սիրիկը մի ռուս դայեակ ունէր, մի գերմանացի էլ դաստիարակչուհի։ Իսկ Սիրիկի մայրը մի ֆրանսուհի տնտես կին ունէր, որ տան հոգսն էր քաշում. կերակուրների պատուէրներն էր տալիս, մայրիկին զուգում էր, հագցնում և ծիծաղաշարժ պատմութիւններ անում։ Հայրիկն ու մայրիկն էլ միմեանց հետ միշտ ռսերէն էին խօսում։ Դէ՞ հիմի դուք ասացէք՝ Սիրիկը ինչ լեզուով կը լինէր խօսելիս։

* *
*

Սիրիկենց ընակարանի ամենանեղքևի յարկում Յովնանեան օրիորդաց ուսումնարանի ուսուցիչ պարոն Գրիգորեանն էր ապրում իր կնոջ և վեց մանրահասակ զաւակների հետ: Սրանք աննման երգեր էին իմանում և լաւ եղանակներին, երբ Սիրիկը իջնում էր իր տիկնիկների հետ բակում պտօսնելու, հրաւիրում էր և Վարդանուշին, Հայկանուշին, Զարէհին, Զարմայրին, Աստղիկին և Արամին էլ: Սրանք երգում էին, պարում, վազվզում. հանելուկներ, շուտասելուկներ ասում:

Խեղճ Սիրիկը մնում էր լուռ. նա մայրենի լեզուով ոչ խօսել էր իմանում և ոչ երգել:

* *
*

Ամեն անգամ Սիրիկը բակից վերադառնում էր կոտրուած, թառանչ քաշելիս:

Իսկ հայրիկն ու մայրիկն էլ գլխի չէին ընկնում, թէ ինչու է Սիրիկն այնքան սրտնեղում, մտորում:

Եւ ամեն անգամ երբ Սիրիկը իր տիկնիկին պառկեցնում էր որ քնացնի, միշտ աղօթում էր, որ Աստուած նրան այնպիսի շնորհք տայ, որ կարողանայ Զարէհի ու Վարդանուշի նման հայերէն կարդալ, երգել ու խօսել:

* *
*

Ա՜սաւած, ինձ շուտ արա մեծացրուս, որ ես Աղբիւր ստանամ և իմ տիկնիկներին հայերէն գրել-կարդալ, խօսել սովորեցնեմ։

Սիրիկի մայրիկը մի օր պատահմամբ լսել էր նրա աղօթքը։ Սիրիկը Աստուած էր կանչում և իր տիկնիկին խոստանում, որ երբ ինքը մեծանայ, անպատճառ նրա համար Հայկանուշի նման կրստանայ պատկերազարդ ԱՂԲԻՒՐԸ, և կը ստիպուի նրան հայերէն երգել ու կարդալ-գրելը։

Սիրիկի մայրիկը ամուսնուն յայտնեց իրանց զաւակի աղօթքը, և ահա այս տարի նրանք ստորագրել են և ստանում են թէ ԱՂԲԻՒՐԸ և թէ ՏԱՐԱԶԸ։

Սիրիկը դեռ չէ նկատել ԱՂԲԻՒՐԻ հէնց այսօր ստացած նոր տարւայ 30-րդ յունուարի տետրը։

Եւ որքան պիտի նա ուրախանայ, որ աղօթքը պրծնելուց յետոյ երբ երեսը չուռ տայ և տեսնի իր տօնածառի կշտին ԱՂԲԻՒՐԻ փայլուն այս տարւայ յունուարի գիրքը։

Զարուհի

ՋՊՈՒՐՆ ՈՒ ՈՒՂՏԸ

Մի առաւօտ, ճաղուռ քուրին
Ժամացոյցը իր ձեռին,
Եկաւ կանգնեց ուղտի դռան
—«Բարև բիձա, ասաց նրան—
Կարծեմ դու մի լաւ վարպետ ես
Ժամացոյցներ կը շինես.
Ա՛ռ էս իմն էլ, ազաչում եմ
Մի լաւ շինիր գամ տանեմ։
Վարձ էլ կը տամ, հոգս մի անի,
Միայն խնդրեմ չուտ լինի»։
—Ի՞նչես խօսում ճաղուռ քուրի
Հապա մի եկ ներս արի,
Վարպետ լինելս ո՞վ ասաց—
Հարցրեց ուղտը զարմացած.
Մի լաւ նայիր ձեռք ու ստքիս
Կոշտ ու կոպիտ ձևերիս,
Ապա դատիր, կրնա՞մ լինի
Մի մեծ վարպետ անուանի։
Չէ՛, ժամացոյցդ առ ու գընայ
Ուղտը վարպետ չի՛ դառնայ...

Պետ. Մոճոռեանց

«ԵՍ ՏԻԿԻՆ ՈՒՆԵՄ..»

(Նւէր «Աղբիւրի» 30-ամեակին)

Ճաշն անցաւ շատ ուրախ։ Եւ ի՛նչերը չը խօսեցին այսօր ճաշի վրայ։ Հերիքը մի՛թէ կարող էր հանգիստ ճաշել և չասէր մայրիկին, որ նա մի անգամ էլ կարդայ նամակը։ Ո՛չ. Հերիքը միայն զսպեց իրան ճաշի վրայ միրգն ուտե-լիս։

— Բայց ի՛նչպէս է թռթռում Հերիքի սիրտը։

Նա շատ անգամ է ուրա-խացել, բայց այսօրւան ու-րախութիւնն ուրիշ է։ Եւ ի՛նչ-պէս չուրախանար. նամակը բերում էր նրա համար շատ նորութիւններ։

Այսօր հէնցոր պատրաստւում էին նստել ճաշի, յան-կարծ զանգահարեցին։ Ամենքը դուրս թռան։ Հերիքը յետ չը ճնաց, նոյնպէս վազեց պատշգամբը։

Դուրսը կանգնած էր նամակաբերը։ Ամենից առաջ Սուրէնը մօտեցաւ նամակաբերին։

— Տո՛ւր ինձ, տո՛ւր ինձ,— ասաց նա, վերցնելով նա-ժակը։

Եւ այդ նամակն էր, որ Հերիքին ուրախութիւն պատ-ճառեց։ Մօրաքոյրը գրում էր.

ՍԻՐԵԼԻ ՔՈՑՐՍ

«Թէև շատ ուշ, բայց աւելի լաւ է ուշ քան երբէք... Ուղարկում եմ Հերիքի շապիկները, ուղարկում եմ և տի-

կինը և ինքնաեռը... Մի ամիս է, որ առել եմ, բայց ժամանակ չէը լինում, որ ուղարկեմ։

Ասա Հերիքին, որ ինքնաեռը սարքի, տիկինին թէյ տայ. տիկինը ճանապարհից եկած շատ ծարաւած կը լինի։

Մենք բոլորս առողջ ենք և ցանկանում ենք առողջութիւն բոլորիդ. ցանկանում ենք առողջութիւն և Հերիքին։ Հոխփսիկը, աղջիկս, Հերիքին տեսել էը երազում, շուտ դարթնել էը և չէը կարողացել համբուրել, շատ ցաւեց. դէ, դու համբուրիր Հերիքին Հոխփսիկի տեղ»։

ՔՈՑՐԴ ԱՆՆԱ։

* * *

Հերիքը ձեռքը դրել էը թշին և մեծ ուշադրութեամբ լսում էը կարդալուն։

—Հի՛, հի՛, հի՛... ծիծաղեց Հերիքը, մաոը դնելով բերանը, երբ մայրը վերջացրեց նամակը և համբուրեց Հերիքին։

—Այս էլ Հոխփսիկի համբոյրը,—ասաց նա։

Յանկարծ Հերիքը բարձրացաւ աթոռի վրայ։

—Մայրիկ, մէկ էլ կարդա, մէկ էլ կարդա։

Մայրը մէկ էլ կարդաց նամակը և երբ վերջացրեց, ասաց.

—Դէ, մէկ էլ պահեմ։

—Մ՛յ, մայրիկ, այստեղից կարդա՛, այ, այստեղից...

—Էլի կարդամ։

—Հա՛,—կորուկ կերպով կանչեց Հերիքը։

—«Ուղարկում եմ Հերիքի շապիկները...

—Չէ՛, չէ, մայրիկ, այ այստեղից կարդա՛։

—«Մի ամիս է որ առել եմ...

—Չէ՛, այստեղից։

—«Ուղարկում եմ ինքնաեռը և տիկինը...

—Հա՛, հա՛, այստեղից կարդա՛...

Եւ Հերիքը այնպէս բարձրացաւ աթոռի վրայից, որ աննկատելի կերպով ձգւեց սեղանի վրայ։

—Ի՞նչ կանես տիկինը,—հարցրեց մայրը, նամակը մի անգամ էլ կարդալուց յետոյ։

Մի՛թէ Հերիքը գիտէ, թէ ինչ կանէ։ Ամենից առաջ կը սարքէ ինքնաեռը, կը պատրաստէ թասերը, տիկինին կը նստացնէ այ այսպէս իր կողքին և թէյ կը խմացնէ, շաքար կը տայ... Նա միայն չը գիտէ՝ տիկինը մեծ է, թէ պստիկ։ Մի անգամ նրան նկարեցին մի լաւ տիկնիկ, բայց ո՛ւր ընկաւ տիկինը, նա չը գիտէ, մինչև այսօր էլ չը գիտէ։ Ո՛չ, այս նոր տիկինը նա չի կորցնի։ Հերիքը այժմ պստիկ չէ, հինգ տարեկան է, նա գիտէ ինչպէս պահէ։

—Մայրիկ, երբ կը ստանանք տիկինը։

—Վաղը, վաղը։ Այդ պոստի կոչնագիրը դիր սեղանի վրայ, որ չը կորչի—թէ չէ տիկինը չի գայ։ Վաղը կերթանք միասին, կը ստանանք։

Հերիքը դրեց կոչնագիրը սեղանի վրայ և հեռւից սկսեց դիտել, որ եղբայրը չը վերցնէ։

—Սուրէն, մի՛ վեր առ կոչնագիրը,—ասում էր նա, երբ տեսնում էր իր մեծ եղբօր Սուրէնի մօտենալը սեղանին։

—Սուրէն, սեղանից հեռու գնա։

Սուրէնը ծիծաղում էր և հանաքով ձեռքը մեկնում կոչնագրին։ Հերիքը հասկացաւ, որ եղբայրը կատակ է անում և թողեց նկատողութիւններ անելը։

**
*

Եկաւ հայրը. նա ուշացել էր, ուստի մենակ նստեց ճաշելու։

—Հայրիկ, տիկին ունեմ, տիկին ունեմ, ինքնաեռ ունեմ, դու չունես—մօրաքոյրն է ուղարկել...

Եւ Հերիքը ձեռները մեկնեց հօրը, և երբ հայրը մօտեցաւ որ նրան համբուրէ, Հերիքը ձեռներն իջեցրեց, կզակը սեղմեց կրծքին և յետ-յետ գնաց։

Հերիքը սիրում էր, որ իրան համբուրեն կզակի տակից և այդ ժամանակ նա գլուխը բարձրացնում էր ու ծի-

ծաղում—բայց այս անգամ Հերիքի կամակորութիւնն էր բռնել և հօր մօտ չէը գալի։

—Արի՛ պաչեմ,—կանչում էր հայրը։

—Չէ՛։

—Արի՛։

—Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛... յետ-յետ քաշուեց Հերիքը։

—Ես տիկին ունեմ, ես տիկին ունեմ...

**
*

Միւս օրը, առաւօտուայ թէյից յետոյ, Հերիքը մօր և եղբօր հետ գնաց պոստը և առաջին անգամ տեսաւ, թէ ինչպէս մայրը տուաւ կոչնագիրը, իսկ պոստի մարդը տուաւ նրան մի փաթեթ։ Բայց պոստում նրան երկար սպասել տւին, որովհետև շատ մարդ կար այնտեղ։

Երբ նա տուն եկաւ, շտապով դիմարկը գցեց մահճակալի վրայ և ասաց։

—Ինչքան տեղից ենք գալի. տրամւայով գնացինք, տրամւայով եկանք... Ա՛յ, օյ, ինչ շոք է... Եւ նա աջ ձեռքով հովհարեց երեսը. իսկ երբ քանդեցին փաթեթը, նա դիտեց խոր ուշադրութեամբ։

—Շորեր են, մայրիկ, շորեր,—ասում էր նա աչքը չը հեռացնելով փաթեթի միջից հանելիք գոյնզգոյն կտորներից,—բայց տիկինը չը կայ... Վայ ինչքան բաներ՝ շղարշներով... ռվ. վայ-վայ... Տուր ինձ. ինչ լաւ կտորներ են. ինքնաեռը, այ, թասը, պնակը, տես չը կտորես,—դիմեց նա եղբօրը,—այ, էլի թաս, էլի պնակ, ինչքա՜ն, էլի՛, չորս-հինգ... Մայրիկ, մէկ հատ պնակը չը կայ...

—Ա՛յ, տիկինը,—յանկարծ բացականչեց նա, ծափահարելով և շակւելով աթոռի վրայ,—ինչ լաւն է, ինչ լաւն է։ Մայրիկ, մայրիկ, տես, տիկինի ոտները կապած են, բացէք ոտները... ինչ սիրուն է. տիկինին նայիր, մայրիկ, կապոյտ շորերով, կարմիր գոգնոցով... Ռուս տիկին է... եղբայրը ծիծաղեց։

—Ո՞ւր է, որ ռուս է։

—Ա՛յ, մազերը չես տեսում,—ասաց Հերիքը, մատնանիշ անելով շէկ մազերը։

* *
*

Հերիքը նստել էր թախտի վրայ և խաղում էր տիկինով։

Եղբայրը պատուհանի առաջ թղթից աղաւնիներ էր կտրատում։

Երբ եղբայրը բարձրացրեց գլուխը, Հերիքը յարմարեցնելով բոպէն արագ ու ճարպիկ կերպով և ուրախագին ժպիտը երեսին օրօրում էր տիկինին և ասում.

—Սուրէն, տես։

Եղբայրը ծիծաղում էր, իսկ այդ միջոցին Հերիքը լի հետաքրքրութեամբ էջեցնում էր իր աչքերը տիկինի երեսին, կրկին սեղմում կրծքին, կրկին ասում.

—Ջեմ տայ. չեմ տայ. դու չունես։

—Բեր կտրենք մազերը,—ասաց Սուրէնը, մեկնելով ձեռքի մկրատը։

—Չա, ինչպէս չէ։

Եւ Հերիքը շատ ամուր սեղմեց տիկինն իր կրծքին։ Յետոյ վերցրեց սանրը և սկսեց սանրել տիկինի մազերը։ Այդ միջոցին խոհանոցից ներս մտաւ մայրը։

—Օ՛, օ, օ... շապիկը տես, մայրիկ։ Թէյ խմացնեմ տիկինիս, կը քնացնեմ։

Եւ Հերիկը նորից ժպտաց, ուրախ-ուրախ օրօրելով, վեր բարձրացնելով տիկինին. յետոյ կանգնեց թախտի վրայ, ոտքի մատների վրայ և տիկինը բարձրացրեց գլխից վերև։

Նա ուզում է, որ տիկինը երբէք չը տխրէ։

Գիշերը Հերիքը պառկեց քնելու, տիկինն էլ դրեց ծոցում։

Հայրը նստած սեղանի առաջ կարդում էր։

Հերիքը աչքերը գցում էր հօր երեսին, ձեռքը դնում տիկինի վրայ և կանչում։

—Հայրի՛կ։
—Ջանի՛կ։
—Հայրի՛կ
—Ջանի՛կ։
—Հայրի՛կ, հայրի՛կ, հայրի՛կ...
—Ջանի՛կ, ջանի՛կ, ջանի՛կ...
—Հայ—ր -ի—կ...
—Ին—չ—ը...
—Ես տիկին ունեմ...
Յետոյ նա գրկեց տիկնիկը և նայեց հօրը։
—Քեզ չեմ տա՛յ։
—Աբի պաչեմ։
—Ես տիկին...

Եւ Հերիքի ձայնը կորաւեց։ Նրա սև խուճուճ մազերը ընկան բարձի վրայ. երեսի արտայայտութիւնը խաղաղ և անմեղ կերպարանք ստացաւ, թշերը կարմրեցին—միայն աչքերի սևուցներն էին, որ չէին փայլում...

Հայն կոպերը իջնելով թշերի վրայ ծածկել էին նրանց փայլը։

Յ. Սօլօվեան

Նոր տարւայ աղջիկը խոզեր է արածացնում

ՆՈՐ ՏԱՐՒԱՅ ՆԱԽԸՆԹԱՑ ԳԻՇԵՐԸ

(Անդեբսեհնից)

Շատ ցուրտ էր։ Ձիւն էր գալիս, և սկսում էր արդէն մթնել։ Հին տարւայ վերջին երեկոն էր։

Փողոցով անց էր կենում մի աղքատ աղջիկ, բաց գլխով և ոտաբոբիկ։ Ճիշտ է, երբ աղջիկը դուրս եկաւ տնից, հագած ունէր իր մօր կիսակօշիկները, բայց ճանապարհին երբ նա անց էր կենում փողոցի միւս կողմը երկու վազող կառքի միջով, ոտից հանուեցլայն ոտնամանները մէկը և կորաւ։ Միւս կիսակօշիկն էլ փախցրեց մի փողոցային տղայ ու ոտաբաւ, նաւ շինելու։ Աղջիկը գընում էր բոբիկ. նրա ոտիկները կարմրել և կապտել էին ցրտից։ Գոգնոցում նա ծախելու համար ածել էր շատ լուցկիներ, որոնցից մի կապոց էլ բռնած ունէր ձեռքին։ Վատ օրում էր նա։ Ամբողջ օրը շրջել էր, բայց ոչ ոք նրանից լուցկի չէր գնել, մի կոպէկ փող չէր տուել։ Ծեղճը մրսում ու քաղցած էր. երեսի վրայ երևում էր, որ նա տանջւում էր։ Անբաղդ երեխայ։ Ձիւնը փաթիլ-փաթիլ թափւում էր նրա շէկ մազերի վրայ, որոնք գանգուրներով ոլորւել էին նրա վզին։ Բայց նա ուշադրութիւն չէր դարձնում իր գանգուր մազերի վրայ և չէր էլ մտածում նրանց մասին։ Տների լուսամուտները լուսաւորւած էին ճրագներով, և տապակած մսի անուշ հոտը փչում էր դէպի փողոցը. ամեն տեղ պատրաստւում էին դիմաւորելու Նոր-Տարուն։ Ահա թէ ինչի համար էր մտածում երեխան։

Վերջապէս նա ապաստան գտաւ մի անկիւնում, որ գոնը-
ւում էր երկու տան արանքում։ Այստեղ կուչ եկած նըս-
տեց նա հանգստանալու։ Յոգնից սառչում էր նա, բայց
չէր համարձակւում վերադառնալ տուն, որովհետև լուցկին
ծախւած չէր, չունէր ոչ մի կոպէկ։ Հայրը կը ծեծէր նը-
րան. բացի դրանից նրանց տունը բաւականի ցուրտ էր։
Նրանք ապրում էին մի ծածկոցի տակ. քամին փչում էր
ամեն կողմից, թէպէտ ամենամեծ ճեղքերը ծածկւած էին
յարդով և փալասներով։ Երեխայի ձեռները կուչ էին ե-
կել ցրտից։ Ա՜խ, մի լուցկին էր կարող օգնել նրան,
եթէ նա համարձակւէր հանել կապոցից, չըրթացնել պա-
տին, վառել և տաքացնել նրանով իր մատները։ Երկար
մտածելուց յետոյ, նա հանեց գոգնոցից մի կապոց լուցկի
և վառեց։ Չը՛րթ... Օ, ինչպէս բռնկաց։ Աղջիկը բռնեց իր
ձեռները վառած լուցկիների վրայ, որոնք այրւում էին
մոմի նման։ Եւ նրան թւում էր, որ նստած է մի մեծ
երկաթէ վառարանի առաջ։ Ի՜նչպէս գեղեցիկ վառւում էր
կրակը, ինչ լաւ տաքացնում էր։ Երեխան ուզում էր մեկ-
նել ձեռները դէպի կրակը, որպէս զի տաքացնի, բայց
կրակը հանգաւ, վառարանը անյայտացաւ. և խեղճի ձեռին
մնաց միայն այրւած լուցկիի կոթը։ Նա չըրթացրեց միւս
լուցկին. լուցկին վառւեց և լուսաւորեց պատը, և լուսա-
ւորւած պատի տեղը այնպէս թափանցիկ դարձաւ, որ ե-
րեխան տեսաւ մի սենեակ։ Այդ սենեակում դրւած էր
մի սեղան, ծածկւած սպիտակ սփռոցով։ Սեղանի վրայ
դրած էին պլպլան ճենապակու ափսէներ։ Մէջտեղի մեծ
ափսէից գոլորշի էր բարձրանում տապակած սագից, որ
պատրաստած էր սալորի և խնձորի հետ միասին։ Յան-
կարծ սագը վեր թռաւ մեծ ափսէից և գլորւեց յատակի
վրայ, մէջքին ցցած պատառաքաղը և դանակը. սագը գը-
լորւելով, մօտեցաւ խեղճ աղջկան։ Բայց լուցկին այդ ժա-
մանակ հանգաւ, և նրա առաջ կանգնած էր միայն հաստ
և սառը պատը։ Ահա վառւեց երրորդ լուցկին։ Եւ աղջիկը
տեսաւ, որ ինքը կանգնած է մի գեղեցիկ ծննդեան

տակ։ Տօնածառը անհամեմատ աւելի լաւ էր սարքած և աւելի բարձր էր այն տօնածառից, որ նա տեսել էր անցեալ Ծննդեան ապակի դռների միջով մի հարուստ վաճառականի տան մէջ։ Հազար մոմեր էին վառւում կանաչ ճիւղերի վրայ, և գոյնզգոյն պատկերները, որոնց նմանները նա տեսել էր խանութների լուսամուտներում, վերևից նայում էին նրա վրայ։ Երեխան մեկնեց երկու ձեռները, բայց այդ միջոցին լուցկին հանգաւ։ Տօնածառի մոմերը սկսեցին հետզհետէ բարձրանալ վերև, և նա մոմերի տեղ տեսաւ աստղերը երկնքում։ Մի աստղ վայր ընկաւ և յետևից հրեղէն գիծ թողեց։ Երևի մի որևիցէ մարդ մեռաւ, մտածեց երեխան։ Նրա հանգուցեալ պառաւ տատը, որ նրան միակ սիրողն էր, շատ անգամ ասել էր նրան, թէ երբ երկնքից աստղ է վայր ընկնում, այդ մի որևիցէ մարդու մահ է նշանակում։ Նա չըրթացրեց էլի մի հատ լուցկի, շուրջը լուսաւորուեց և տեսաւ իր առաջ կանգնած պառաւ տատին, պայծառ երեսով ու քաղցր ժպիտով։ — Տատի՛կ, բացականչեց երեխան. տա՛ր ինձ քեզ մօտ։ Գիտեմ, երբ կը հանգչի լուցկին, դու էլ չես լինիլ։ Դու կ՚անյայտանաս, ինչպէս էլ որ անյայտացան վառարանը, տապակած սագը և գեղեցիկ տօնածառը։ Նա արագ չըրթացրեց լուցկիների ամբողջ կապոցը, որովհետև չէր կամենում շուտով զրկուել իր տատի ներկայութիւնից։ Լուցկիները այնպէս փայլեցին, շուրջը այնպէս լուսաւորուեց, որ կարծես ցերեկ լինէր։ Ոչ մի ժամանակ նրա տատը այնպէս գեղեցիկ չէր երևացել, ինչպէս այդ գիշեր։ Տատը գիրկն առաւ երեխին, և երկուսն էլ բարձրացան վերև, թռան այնտեղ, ուր չը կար ոչ ցուրտ, ոչ քաղց, ոչ էլ տանջանք — նրանք գնացին Աստուծոյ մօտ։ Լոյսը բացուեց. ցուրտ առաւօտ էր։ Անկիւնում պատին թէք ընկած՝ նստած էր խեղճ աղջիկը կարմիր թշերով, ժպիտը բերանին։ Նա սառել էր հին տարւոյ վերջին գիշերը։ Նոր տարւոյ արևը ափուեց իր շողքերը փոքրիկ դիակի վրայ։

Երեխան փետացած նստած էր, լուցկինները գոգին։ Մէկ կապոց բոլորովին այրուած էր։

—Երևի, խեղճը կամեցել է տաքանալ,—ասում էին անցորդները։

Ոչ ոք չէր կասկածում, թէ երեխան ինչ հրաշալի բաներ էր տեսել։ Ոչ ոք չը գիտէր, թէ ինչպիսի հանդիսաւոր կերպով նա իր տատի հետ միասին վերացաւ դէպի նոր-տարւայ ուրախութիւնները։

Or. Մարգարիտ Յարութիւն-Թումանեան

Նոր տարւայ գիշերը մայրիկը երազում տեսնում է, որ ինքն ընկել է մի մեծ բուրաստանի մէջ, չորս կողմը անուշաբոյր ծաղիկներ և փոքրիկ հրեշտակի նման իր շուրջը մանուկներ։ Յրանցից մէկը, փոքրիկ Ճապոն, հագին այն խալաթը, որ ինքը կամենում էր առնել իր Վարդանուշի համար երէկ, բայց շատ թանգ լինելով չը կարողացաւ առնել։

Փափախչի Աբեի դպրոցը

I

Ցլնոր ձմեռն էր։ Ձիւնն եկել, սար ու դաշտ, գեղ ու գեղամէջ ծածկել էր սպիտակ սաւանով։ Էլ ոչ տունն ու կտուրն էր երևում, ոչ կալն ու կալապանը. ոչ փողոցները էին ջոկւում և ոչ թաղամիջի շաւիղները։ Ամեն ինչ ձիւնի հաստ շերտի տակ ճնացած՝ կ... գիւղը նմանում էր մի կիսաւեր բնակութեան, ուր՝ ձիւնաշաղաղ խրճիթների ծխնելոյզներից հազիւ միայն ծուխ էր բարձրանում։ Էդ ծուխն էլ որ չը լինէը, անծանօթներից ոչ ոք չէր հաւատայ՝ թէ էդտեղ գիւղ կայ և մարդիկ են բնակւում։

Էս տարօրինակ եղանակին՝ ամենքը քունջ ու պուճախ մտած, իրենց վառ օջախների շուրջը և կամ տաք գոմերի թախտերին ծալապատիկ նստոտած՝ զանազան զրոյցներով էին զբաղւած։ Միայն շաւերի տան մատղաշ տղաները-հօրիքչին ու հորթարածը, ուլարածն ու խոզաբածը, որպէս փափախչի Աբեի ուսումնարանի աշակերտներ՝ տանը ճնալու էդ ուրախութիւնից զրկւած էին։ Առաւօտը կանուխ, հազիւ «լիան ու մութը» իրարից բաժանւած՝ պէտք է զարթնէին ու շտապէին դէպի ուսումնարան։ Ասւած մի՛ արասցէ, թէ նրանցից մէկն ու մէկը՝ թընդ-թընդար և չուզենար ուսումնարան գնալ, հէքիմ ապին, կամ Սահակ բիձէն, Քալի նանը կամ Օսան հարսը այնպիսի նախադինք կը տային ծուլացող փոքրիկներին, որ ամօթից նրանք գետինը կը մտնէին։ Շատ անգամ նոյնիսկ քոթակ էլ էին ուտում նրանք...

Նրանց ծուլութեան և ուսումնարան չը գնալու պատճառը ոչ իրանց դասերի դժւարութիւնն էր և ոչ էլ ուստա Աբենից ունեցած երկիւղը, այլ էն ցուրտն ու սառ-

նամանիքը, որ տանից սկսած մինչև դպրոց նրանց սառեցնում և խեղդամահ էր անում։ Եւ ահա, այս իսկ պատճառով Աթենի աշակերտներից շատերը, իրանց տներից դուրս գալուց յետոյ, փոխանակ դպրոց գնալու, շտապում էին իրանց հարևանների կամ հօքրի ու մօքրի տունն և այնտեղ անցկացնում ամբողջ օրը, շատերն էլ երկիւղից ստիպւած՝ դիմում էին դէպի դպրոց։

Ահա Աղբաբանց Բէջանը հին ցնցոտիների մէջ փաթաթւած, գլխի փափախը մինչև ականջները խրած, ոտքի ծակւած տրեխներից մէկի տղափը (լաթ) քաշ տալով, մի ինչ-որ կապոց մէջքին կապած, ձեռքերը խաչմերուկ կոնների տակը կոխած, ատամներն իրար խփելով, շպրտւած քարի նման թռչում էր դէպի դպրոց։ Տանը կերած ձւածեղը պնչիցը դուրս կը գար՝ մինչև դպրոց կը հասնէր նա։

Նա էլ՝ Ղլջանց Մամօն էր. ցեցը կերած բաշլուղը գլխին հագած, գզգզւած եաւինջու մէջ ամուր կոլորւած, հալածւած ձիու նման չափ էր ընկել դէպի նոյն տեղը։ Թէև եաւինջին խանգարում էր խեղճ մանուկին աւելի շուտ վազելու, բայց և այնպէս ցուրտն էնքան ուժեղ էր, որ նրան մոռացնել էր տւել ամեն տեսակ դժւարութիւն։

Անհնարագրելի էր Հանէս ապնինց Մեչօի դրութիւնը. ո՛չ ոտքին կար ո՛չ գլխին, ո՛չ իրիկունն էր մի տաք բրթօշի արժանացել և ո՛չ էլ առաւօտեան բերանը մանանայ դրել։ Մի չոր քար գարու հացի յուսով, գլուխն առել՝ ուսումնարան էր շտապում։ Եւ էն խեղճ ողորմելին գնում էր ուսանելու, որովհետև իր հասակակից տղաներն էլ էին գնում. գնում էր որ նրանցից յետ չը մնայ։

Էսպէս ահա, փափախչու դպրոցի աշակերտները մէկը միւսից աղքատ ու անճար մարդկանց զաւակներ էին։ Նրանք յանձնւած էին Ուստայ Աթենին, որ նա նրանց միս ու ոսկրից հանի և մի կերպ ուսում տայ։ Վարձի փոխանակ մանուկները պէտք է Աթենի համար մորթի մաքրէին, կար ու ձև անէին, փայտ կոտրէին, նրա տան բոլոր ծա-

ռայութիւնները կատարէին, իսկ դրանց փոխարէն Ուստայ Աթին պէտք է նրանց գիր-կարդալ սովորեցնէր։

II

Փափախչի Աթնի ուսուցչարանը գտնւում էր Կ... գիւղի մի ծայրին։ Գրողը տանի նրան, թէ նա ուսուցչարան էր։ Մի մութը, խոնաւ ու խարխուլ գետնափորը գոմ էր էդ կրթավայրը։ Աթին՝ շնորհիւ իր ուստայութեան՝ իրեն համար վաղուց նոր գոմ էր շինել ու իր անասուններին խնամքով տեղաւորել։ Իսկ էդ խարխուլ գետնափորն էլ՝ դատարկ չը թողնելու համար՝ աշակերտներ էր հաւաքել ու անունը դրել «յուսուչարան»։

Ինքը Աթին՝ հազիւ գրի սև ու սպիտակը ճանաչում էր, հազիւ ագռաւի ճանկերի նման՝ խըզի-բըզի էր անում և ահա վարժապետ էր կոչւում, նոյնիսկ գիտնականի հըռչակ ունէր գիւղի մէջ։

—Պահ, պահ, պահ, Աթին համ լաւ փէշաքար ա, համ էլ կարգին վարժապետ, նրա գրած թուղթը քար ճոթ կանի։

—Տէր-տէրն ինչ ա, որ նրա առաջը խօսի, հէնց շըրալի «փառք իմ բարցումք» ա ասում անգիր, որ կասես Հախպատայ վրդապետն ըլի։

Ահա էսպիսի գովասանքների հետ էր կապւած ուստայ Աթնի անունը։

Աթնի աշակերտները վաղուց հաւաքւել էին գոմամէջ։ Ղըլըջանց Մամօն բուխարին չաղ էր արել. մի մեծ ընձաղակոթ (կիսայրեալ փայտ) գցել էլ կրակի վրայ, չորս կողմից չոր ջախ վրայ տւել ու բոցավառել էր կրակը։ Թանձր ծուխը տարածւելով ամբողջ գոմի մէջ կծու դաղոցով և խայթում էր կրակի չորս կողմը նստոտած մանուկների կուրծքը, և խանձում էր նրանց ցամաքած կոկորդը։ Նրանք մերթ կրակի փայտերը յարմարեցնելով և մերթ փչելով՝ մէկ մէկու հետ զրոյց էին անում և սպասում վարժապետին։

—Ադա, Սիմօն, էդ խի ա ճակատդ կապտած. չըլի

թէ՝ տանը դնգզակոխ են արել,—հարցրեց Աղբաբանց Բէջանը հետաքրքրութեամբ։

—Մահը տանի էս «ըշկօլին» ինչ մեր ջանին սև ցաւ ա դառել,—խօսքը փոխեց Սիմօնը,-բա էս սև ու մթին օրին, էս քար ու քանդ բրիշակումը ետ կար անել կըլի՞, ետ ասեղ թելիլ, ետ կամ թէ չէ գիր կարդալ...

—Տղերք, եանի՞ աշխարհքի յուսուաճարաննին էլ մեր գոմի նման են, թէ մենակ էս սևակոլոր աւերակին ա ըսէնց,—հետաքրքրուեց Ղըլջանց Սահակի Մամօն։

—Ադա, ի՞նչ ես չտեսի պէս դուս տալիս. բա չես իմացի՞լ, որ Դիլի (Դիլիջան) յուսուճարանը քարաշէն տուն ա, ու շադիրդնու (աշակերտների) առաջն էլ մի-մի դազգահ կայ դրած, որ կարդին ձև ու կար անեն, գիր գրեն ու կարդան,—վերջապէս խօսեց Հանէսի Մեչօն, որպէս դպրոցի մասին լաւատեղեակ աշակերտ։

—Էդ ու գէօրա էլ նրանց վրժապետը քեանդրբազի (լարախաղաց) նման ղօչաղ կըլի՞, էլի։

—Բա ի՞նչ ես գիտում։ Չէ՛, չէ՛, մեր վրժապետի նման քաւթառքուսի կըլի՞...

Էսպիսի զրոյցներով կշտանալուց յետոյ, երբ մի քիչ էլ տաքացել էին, վերկացան և սկսեցին ուստի դազգահը (սեղանը) մաքրել, ապա շրջապատելով սեղանի շուրջը՝ մէկ-մէկու կողքի նստատեցին ծալապատիկ՝ մի հին կարպետի վրայ, որ ամիսներով անթափ փուած էր դազգահի տակը, և սպասեցին վարժապետին։

III

Գոմի դուռը ճրռնչալի բացուեց, ներս մտաւ փափախչին։ Աշակերտները ոտքի կանգնեցին, խոնարհութեամբ գլուխ տւին նրան. ապա՝ աղօթելուց յետոյ՝ նստեցին իրենց գործին։ Ուստայ Աթին գիշերով պատրաստած ձևուածքները բաժանեց ամենքին, ասեղն ու թելը տւեց նրանց և կարելու տեղերը ցոյց տալուց յետոյ՝ ինքն իր սուր-սուր բեղերը մի անգամ ևս ոլորեց ու բազմեց իր սովորական տեղը՝ դազգահի վերևի ծայրին։

Հորթարած, հօրիք քշող, խոզարած և ուլարած մանուկների մատներն՝ էսօր էնպէս էին սառել՝ փէտացել, որ սաեղն ու թելը հազիւ իրար անելով, մեծ դժւարութեամբ կար էին բռնում։ Մի առ ժամանակ անցնելուց յետոյ՝ վերջապէս վարժապետը պատւիրեց, որ ամենքն իրանց սովորական կարգով և կարները կարեն, և դասերը կարդան։ Ամենից առաջ սկսեց Մուսէսանց Սահակը։ Նրա ձեռքին մի հին, սևացած այբբենարան կար. և նրա դասն այդ այբբենարանի մէջ եղած աղիւսակն էր. Սահակն սկսեց կարդալ.

—Այբ, ժէ, ճէ, ռա...

Իսկոյն Երգնափեշանց քաղցած Վասլի մտքովն անցաւ. «Սոված մեռայ»։

Սահակը շարունակեց.

—Բէն, լինի, մէն, սէ...

Չիլաւանց Բադամը ընկերներին աչքով արեց դէպի վարժապետը և փսփսաց.

«Բեխիդ եղ քսէ»։

Սահակն անցաւ երրորդ տողին.

—Գիմ, լիւն, յի, վո։

Դարբնանց Մուքէլն առանձին նշանով հասկացրեց ընկերներին։

«Վարժապետը խելքից թեթև»։

Սահակը կարդաց չորրորդ տողը.

—Դա, խէ, նիւ, տիւն...

Հորթարած Նիկալը վրայ բերեց վարժապետի հասցէին։

«Բեխի եղը տարաւ կատուն»։

Ուստայ Աթին գլխով արաւ, Սահակը լռեց. այժմ հերթը Բադամինն էր։ Տարաբախտաբար նա այբբենարան չունէր։ Ձեռքին, դասագրքի փոխարէն՝ մի հին թուականի օրացոյց էր։ Նա օրացոյցը քրքրեց, թէ մէջն այբբեն գտնի, բայց չը յաջողւեց։ Աթին կարծելով, թէ նա դասը չէ սերտել, սաստիկ զայրացաւ և ձեռքի մկրատով այնպէս պինդ չաքուչեց մանուկի գլխին, որ խփած տեղը կոպի կանգ-

նեց։ Բադամի ցամաքած աչքերից «գիլա-գիլա» արցունքները գլորւեցին, և քթի ծակերից բարկութեան ծուխ ելաւ։ Բայց ինչ կարող էր անել, քանի որ հայրն իրան վարժապետին յանձնելիս ասել էր.

«Էս իմ տղէն, էս դու. միսը քեզ, ոսկորն ինձ, միայն թէ փեշակ և ուսում սովորեցնես»։

Բադամից յետոյ գիրքը ձեռքն առաւ ուլարած Մակիչը, Նրա դասը «Հայր մեր»-ն էր, և նա սկսեց.

—Հայր մերդինք, սուրբ եղուձու, անըմ քոյին։

Մակիչի ասածի վրայ բոլորը փրթիկացրին և կուշտ կուշտ ծիծաղեցին։ Վարժապետը կարդացողի գլխին պինդ բամփեցուց յետոյ, նրա սխալն ուղղելով ասաց.

—Եղուձու. չէ, չէ, բօզբաշ... կըւսես էլ։

Մակիչը նորից կարդաց։

—Հայր մերդինք, սուրբ բօզբաշ, անըմ քոյին։

Ծիծաղն այս անգամ չազացաւ։ Վարժապետը խիստ բարկութիւնից բարակ ճիպոտով մէջքախառն մի լաւ տրւեց նրան ու լռեցրեց։ Ապա դնչով արաւ, որ Զուստիկ Ունանը կարդայ իր դասը։

Ունանին իզուր չէին ասում Զուստիկ... Նա գիրքը ձեռքն առնելուն պէս այնքան արագ-արագ կարդաց իր դասը և մէջընդմէջ էլ էնպէս վարպետութեամբ կրկնեց մանուկների հնարած ծաղրախօս շուտասելուկները, որ ուստայ Աթին ոչինչ չը հասկանալով՝ գովաբանեց նրա աշխատասիրութիւնը։ Ունանն իր դասն էսպէս էր համեմում.

—Այբ-բէմ՝ գլխիդ թմփեմ, գիմ-դա՝ սոված գեադա, եչ-զա՝ հէրդ խլէզա։ Նա ամբողջ այբբենը նոյնութեամբ կարդալուց յետոյ, երբ տղաները առամ-առամի տւած, երկիւղից գլուխները քաշ էին գցել, գիրքը փակեց։ Հերթը հասաւ Զաւնին։ Նա երկար ժամանակ չէը ինչ որ ուսումնարան էր գալիս, ուստի և դեռ նոր էր սկսել այբբենը։ Վարժապետն սկսեց սովորեցնել տառերը.

—Ադա, ասա այիփ։

Աշակերտը հնազանդւեց նրան և ասաւ.

—Աղա, ասա այիփ...

—Աա, ասա այիփ։ Զաաին կրկնեց.

—Աա՛, ասա այիփ...

Ուսուցչ Աթին խոժոռեց նրա վրայ և երբորդ անգամ ուղղեց նրա սխալը.

—Այիփ, ասա այիփ։

—Այիփ ասա, այիփ,—կրկնեց Զաաին էս անգամ՝ ճիշտ վարժապետի ձայնով։ Էլ չը կարողացան զսպել տղաներն իրենց. ծիծաղը նորից ծըղրտաց դոմի մէջ։ Աթին, համոզելով, որ նա չնորհք չունի կարդալու, սկսեց ուրիշ դաս տալ, բայց այս անգամ՝ որպէս թէ հանաքի ձևով։

—Զաաի, ասա մեր կարմիր կովը։

Աշակերտը կրկնեց՝

Մեր կարմիր կովը. ուսուցիչը շարունակեց.

—Կթենք։

Զաաին կրկնեց՝

Կթենք...

—Կաթը մերենք։

Աշակերտն այս անգամ՝ ոչ միայն կրկնեց ուսուցչի ասածը, այլև աւելացրեց.

—Մածունն էլ ուտենք...

Մածնի անունը լսելուն պէս՝ ամենքի բերանի ջուրը գնաց։ Բայց՝ «մեղաւորին ծով է տալ արքայութիւն», բոլորը սուաճ փորով նստոտած, հազիւ՝ «պիր-կապ» և «կար ու կըշկուռ» էին անում։

Ամբողջ օրը խեղճ մանուկները նոյն ձևով անցկացրին իրենց ժամանակը. որովհետև օրն էլ ձմեռայ կարճ օր էր, իսկի ճաշամիջոց էլ չունեցան։ Երեկոյեան, երբ սառնամանիքը հազար բանգով սիրապետել էր ամբողջ կ... գիւղը, նրանք ցրւեցին իրանց տուն, մտքումը անիծելով ուստայ Աթնի ուսուցչարանը։

IV

Մի օր էլ, էդ ուսուցչարանի աշակերտները նստած իրենց տեղերում, ուստայ Աթնի գալուն էին սպասում երկիւղը սրտներում։

Մէկ էլ յանկարծ գոմի դուռը ճըռընչալի բաց եղաւ ու շտապով ներս ընկաւ գլխը Նեսօի Պետին։

Ներսը եղողները մէկ կարծեցին թէ ուստէն է, տեղներիցը շարժւեցին ողջունելու. բայց գոմի աղոտ լուսի տակ հազիւ նկատելով Պետնին՝ քըրքջացին և չորս կողմից խօսեցին անբաւականութեամբ.—

—Դու էիր պակաս. էն ա ուշացել էիր, ուշացել. տանը կըճայիր էլի. էլ ինչ էիր գալի. հալբաթ ծեծդ պակաս ա ճնացել...

—Չէ, տղերք չան, չէ. եկել իմ մի թազա խաբար ասելու ձեզ...

—Ի՞նչ, էդ ինչ խաբար ա. հետաքրքրւեցին ամենքը՝ աչք ու ականջ չառած.—չլինի ուստայ Աթին հիւանդ աւ

—Հիւանդ չէ, չէ, մի օյին։ Հրէն պրիսուստուի դռանն ա, հանգստացրեց Պետին։

—Ի՞նչ ա շինում, էդ ինչի են կանչել։

—Բա չէք ասի, էջմիածնից թուղթ ա եկել թէ՝ մեր գեղում թազա, քաղաք դաստուրի յուսուճարան պըտի բացւի. թազա վրժապետ պըտի գայ. ու էս փափախչու յուսուճարանը խափանւել պըտի։

—Ա՛յ թէ լաւ ա ըլէ, հա... ուրախացան ամենքը։

—Գիդաք ինչ. փափախչու անօրէն վրժապետութեան խաբարը տեղ ա հասել և սրան պատրժել պըտեն։

—Օխա՛յ, անջատ սիրտներս կը հովանայ։

—Ադա, Պետի, էդ քեզ ո՞վ ասեց, հետաքրքրւեց Բէժօն։

—Ադա, հէրս գլխը չի՛, էնա թուղթը նրան ա հաւել և քեօխվէն հրամայել ա, որ էս օր, էքուց գեղի հասարակութիւնը հաւաքւեն ու իմանան։ Էկող գարունքւանից ուսումնարան կը շինեն ու աշունքը նոր աշակերտնի կը հաւաքւեն։

—Ա՛յ շէն կենայ Աստծու տունը, ընտուր ա ասած թէ՝ Աստուծ իր ստեղծածին կորցնել չի... էհա նա ազատեց մեզ։

Մինչ այս մտքի և ուրախութեան մէջն էին, մինել Սահակի Մամօն մէջ մտաւ ու խօսեց.—

—Տղերք, ղոչաղ կացէք, շատին դիմացելէք, քչին էլ դիմացէք։ Օրէս դէնը ամենդ էլ սրտով կըպէք ձեր բանին, որ մեր տանեցիք՝ նոր յուսումնարանը բացւի թէ չէ՝ մեզ էն տեղ տան. չըլի թէ ծուլութիւն անէնք. մերոնց ամենքի գահլէն կերթայ, որ տեսնան մեր ծուլութիւնը և էլ նոր ուսումնարանին աշակերտ չեն տայ։ Մէկ էս, մէկ էլ էն որ՝ օրէս դէնը՝ ուստայ Աթոնի ուժը հատած կըլի, նա իր օգտի խաթէր՝ մեզ հետ կարգին կը վարւի, էլ անօրէն կերպով թակել չի, որովհետև լաւ գիտայ, որ էքուցէլօր ինքն էլ ա զրկւելու մեզանից։ Բացի դրանից՝ օրէս դէնը նա մեր սիրտը կառնի, որ շուտ չը հեռանանք նրանից։ Դէ տղերք ջան, մեր թագայ ուսումնարանի խաթէր, եկէք լաւ սովորենք, որ...

Ու նա դեռ խօսում էր, որ յանկարծ տուն մտաւ Աթին ու սուս ու փուս նստեց իր տեղը. նա էս անգամ աւելի բարկացած էր ու նրա դէմքին անբաւականութեան նշաններ կային։

Նա նստեց... մի քանի րոպէ միայ մոլորւած ու չէր իմանում ինչ անի. մէկ էլ յիշեց որ իր յուսումնարանումն է և սկսեց առաջւայ նման իր գործը։

Յ. Աղաբաբ.

ՇԱՀ-ԱԲԲԱՍԻ ԿԵԱՆՔԻՑ

(Էջ իաղ)

Ինչպէս յայտնի է, երևելի մարդկանց, մանաւանդ թագաւորների կեանքից շատ զրոյցներ աւանդաբար պատմում են ժողովրդի մէջ։ Մանաւանդ շատ արտավէպերանեկդօտները կան Շահ-Աբբասի մասին։

Ահա այդ հէքիաթներից մէկը։

Մէկ անգամ Շահ-Աբբասը Իսպահանում, բազարում տեսնում է, թէ ինչպէս մարդիկ իրանց համար ծառայ են առնում։ Ինքն էլ մօտենում և ընտրում է իր համար մէկ ծառայ, հարցնելով, թէ նա ինչ շնորհքի տէր մարդ է։ Ծառայացուն պատասխանում է, որ նա երեք շնորհք ունի. կը ճանաչէ ձիաներ, ադամանդ և մարդկանց։ Շահը բերում է նրան իր ապարանքը, կանչում խոհարարին և պատւիրում. սրան աշ կը տաս, քէբաբ կը տաս։ Խոհարարը կատարում է հրամանը։

Մէկ քանի ժամանակից յետոյ մէկ ձիավաճառ մէկ շատ գեղեցիկ ձի է բերում Շահին ծախելու։ Շահը շատ հաւանում է այդ ձիուն. և երբ հարկաւոր է լինում արդէն արժէքը վճարել, յանկարծ մտաբերում է ծառային, որը ասել էր, որ ձիու արժանաւորութիւնը իմացող է։

Կանչել է տալիս ծառային և հարցնում. Դու ասում էիր, որ ձիու լաւ ու վատը կարող ես իմանալ. ապա ինչ կասես այս գեղեցիկ ձիու մասին։

—Ձին շատ գեղեցիկ է և լաւ, բայց նա ունի մի մեծ պակասութիւն, այն է՝ որ ջրով անցնելիս նստում է ջրի մէջ։

—Ի՞նչ կասես դու, դիմում է Շահը ձիավաճառին, ճիշտ է ծառայի ասածը։ Ուղիղն ասիր, թէ չէ կը հրամայեմ գլուխդ կտրել։

Ձիավաճառը յանձն է առնում ձիու այդ պակասութիւնը և բացատրում վերջինը նրանով, որ երբ ձին ծնեց, մայրը սատկեց և նրան մեծացրին գոմշի կաթնով։

Շահը կանչեց խոհարարին և պատուիրեց.—Ծառային տար խոհանոց և դուր նրան փլաւ, խորոված և այլն։

Անցաւ մէկ քանի ժամանակ, Շահի մօտ բերաւ մէկ ադամանդավաճառ լաւ ադամանդ։ Շահը հաւանեց և երբ կամենում էր առնել, մտաբերեց իր ծառային, կանչել տւեց նրա կարծիքը իմանալու։

Եկաւ ծառան և յայտնեց. ադամանդը լաւն է, բայց նա շուտով կարող է ճաքւել։

Շահը այդ իմանալով չառաւ ադամանդը և էլի կանչեց խոհարարին, պատուիրեց որ ծառային տայ փլաւ, խորոված և ուրիշ կերակուրներ։

Շահի վրայ ծառայի ցոյց տւած ընդունակութիւնը, որը ապացուցեց երկու դէպքերում՝ ձիու և ադամանդ ճանաչելում, շատ լաւ տպաւորութիւն արաւ. նա ցանկացաւ իմանալ և ծառայի երրորդ շնորհքը մարդկանց ճանաչելու մէջ։

Հրամայեց կանչել ծառային։

—Դու երկու բաներում ցոյց տւիր քո շնորհքդ. այժմ ցոյց տուր մարդ ճանաչելու շնորհքդ։

Նախ և առաջ հարցրեց Շահը իր վեզիրների մասին, և բոլորի մասին պատշաճ պատասխան ստացաւ։

—Այժմ դու պատասխանիր. ինչ կարող ես ասել իմ մասին առհասարակ։

—Շահը ապրած կենայ, դուցէ ես այնպիսի բաներ ասեմ ձեր մասին, որ անախորժ լինի ձերդ մեծութեան, ես չեմ կարող համարձակւել բան ասել ձեր մասին։

—Երդւում եմ քեզ, որ ինչ որ ասելու լինես, ես չեմ նեղանալ. ասա անվախ ինչ որ կարող ես իմ մասին։

Ծառան նախ և առաջ ասում է. Շահը ապրած կենայ, դու Շահզադայ չես, այսինքն շահի զաւակ. հարցրու մօրդ։ Այդ կարող էր պարզել միայն մայրը, որին կանչում է և հրամայում, որ նա ճիշտը խոստովանի, արդեօք ճի՞շտ է, որ նա շահզադայ չէ, ինչպէս ասում է ծառան։

Հրամանը ստատիկ տոնով է ասւած լինում, վանորոյ մայրը պատմում է հետևեալը.—

Ես բերել էի 6 աղջիկ միմեանց յետևից, և վերջի պատճառաւորութեանս ժամանակ ամուսինս ինձ ասաց, որ եթէ այս անգամ էլ աղջիկ բերեմ, այն ժամանակ նա ինձ կամ կսպանէ կամ կը վռնդէ տանից: Իմ բաղդից մեր խոհարարի կինն էլ յղի էր: Ես ծնեցի էլի աղջիկ, իսկ խոհարարի կինը՝ տղայ: Մենք փոխանակեցինք մեր երեխաներին. նրա տղային ես վերցրի, իսկ իմ աղջկանս՝ նա: Եւ այդ տղան դու ես, որ այժմ Շահ ես:

Շահ-Աբբասը մնաց զարմացած և ապշած, իմանալով իր ծագումը, թէև այդ շատ դուրեկան չէր նրա ինքնասիրութեան և պատւի համար:

Դիմեց ծառային. Դու ի՞նչպէս իմացար իմ ծագման մասին, ասա անվախ:

—Ես այդ իմացայ նրանով, որ դու հենց առաջի օրից ցայժմ իմ ամեն մէկ շնորհքս ցոյց տալիս փոխանակ իսկական Շահի ցեղից ծագած շահերին, որոնք իրանց ծառաներին պարգևում են փող, խալաթ, ազնւութիւն, խանութիւն և այլն, միայն մէկ բան ես մաքուդ ունենում՝ խոհարարին պատւիրել՝ տալ ինձ փլաւ, խորոված և այլ կերակուրներ: Այդ ապացուցանում է հնուց մնացած յայտնի առածը «Ասլի իթրան հարամզադա ղըր (ծագումը մոռացողը ապօրինի զաւակ է):

Թէ ինչ պարգև տւեց իմաստուն ծառային Շահ-Աբբասը—աւանդութիւնը ոչինչ չի ասում:

Աղամալ Քալանթարեան

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՉԱՆԳԵԶՈՐ

Չենց այս գլխից նախ բացատրեմ, թէ ինչու՞ նախնի Սիւնիք կոչուած երկիրը ապագայ դարերում յորջորջուեց Զանգեզոր. դրա պատճառն այն է, որ այս ինքնատիպ՝ օրիգինալ՝ աշխարհի մի շատ նշանաւոր, երկար, մինչև քան վերստ տարածութեամբ, կենտրոնական Որոտնայ ձորը խիստ մարդաբնակ էր դեռ այն ժամանակ, երբ մարդիկ ապրում էին այրերի մէջ, լեռների ծերպերում, ժայռերի փապարներում փորած ծակերում. դրանք ծակեր անունով մինչև հիմա դեռ գոյութիւն ունին, շատերը անգործածելի, շատերը ծառայում են գոմ ու մարագի տեղ։ Մինչև իսկ Շուշուց Զանգեզոր գնացող ճանապարհի առաջին իջևանը կոչւում է ծակեր, որ գոյութիւն ունին շատ խոր հնութիւնից, փորած են լերան լանջերում, ուր իջնում են ուղևորները և կան մշտական կենդոններ։

Վայրենի և պատերազմական դարերում Որոտնայ ձորը մի շատ յարմարաւոր, անմատչելի, ապահով ապաստան էր ապրելու համար, իր անառիկ դիրքերով, յոգնաթիւ, վիժժան և քլքլան աղբիւրներով, հոծ անտառներով, լի էրէններով, ձկնառատ Որոտնայ գետով և այլն։ Երբ քրիստոնէական լոյսը ծագեց այս երկրում, Որոտնայ ձորը հասաւ իր ծաղկման և զարգացման բարձր կէտին, նա լցւեց շէն գիւղերով, պայծառ, ուսումնատենչ վանքերով և անապատներով։ Գիշեր և ցերեկ Աստուածպաշտութեան ժամերին, երբ Որոտնայ ձորի խիստ բնակչութեան իրարից ոչ հեռու եղած տաճարների և սրբավայրերի զանգերի հնչիւն-

Տաթեւ

ները իրար ձայնակցում էին, ահագնատեսիլ, տպաւորիչ, մեծ և ընդարձակ ձորը լցւում էր բազմաթիւ զանգերի խորհրդաւոր ղողանջիւնով, որի արած ազդու և ուժեղ տպաւորութիւնից ժողովուրդը կոչեց այս ձորը Զանգեձոր, որ և անցաւ ամբողջ գաւառին։

Զանգեր այս երկրում շատ են եղել, որովհետև նրանց ծուլել են նոյն իսկ այստեղ Ղափանի պղնձահանքերում. այդ հնագոյն զանգերից երկուսը դեռ կան Տաթևի վանքում, որոնց վրայի ձուլածոյ արձանագրութիւնից երևում է, որ վեց հարիւր տարեկան են՝ 1302 թւից (հայոց ՉԾԱ)։

Պարսկական և թրքական տիրապետութեան խաւար և ահեղ բռնակալ դարերում իսպառ քամուեց Զանգեձորը, այժմ կան միայն մի քանի խեղճ նշմարանք մնացորդներ, աւելի շատ են թրքաբնակ դարձած գիւղեր քրիստոնէական պատկառելի յիշատակարաններով, աւեր գիւղատեղերով, տաճարներով, վանքերով, է որ կիսափուլ, է որ դեռ կանգուն, սակայն բոլորը ամայի։

Որոտնայ գետի ձորում այժմ կան միայն հետևեալ չորս հայ գիւղերը. Եայիջի, 150 տուն, կոփածոյ հասարակ հին եկեղեցի, ձորի գրեթէ ուղղահայեաց լանջում, ամենաքարքարուտ մի տեղ։ Գիւղից շատ ներքև, Որոտնայ գետի վրայ կայ հին դարերից մնացած մի նշանաւոր կամուրջ, մի կամարով, կառուցած ահագին գետի վրայ, ձգած երկու հանդիպակաց ժայռերի վրայ. տեղացիք անուանում են սրան Ալան Թագաւորի կամուրջ։ Դրանից ոչ հեռու կան խոշոր, ամրաշէն կամարաւոր աւերակներ, փլած տաճարով, խաչարձան շիրիմներով. այս աւերակներում ապաստանած են քսան տուն քրդեր։

Հալիճոր գիւղ, հարիւր տուն, հին, փոքրիկ, պինդ մատուռ. գիւղը դեռեղած է բոլորովին թեք և ահագին քարակառակառ, վիժատ տեղում. գիւղից ներքև, շատ խոր ձորում գետի ափերին ունեն այգիներ. այս երկու գիւղն էլ համարւում են ոչ ունևոր։

Շնհէը, չորս հարիւր տուն, Որոտնայ ձորի ամենից

մեծ և անուանի գիւղն է. ունին բաւարար ապրուստ. գիւղը շատ թեք դիրքի վրայ է շինուած, մի տան կտուրը միւսի բակն է. հրապուրիչ է գիւղի առաջ բացուող սքանչելի



Գորիս, Ջանգեզուրի վերակառուցուած վարչական կեդրոնը

տեսարանը, մանաւանդ ընդարձակ այգեստաններըը, որոնք տների մօտից սկսւելով և ճոխ ու փարթամ բուսականու-

թեամբ իջնելով սարալանջով, հասնում են մինչև Որոտնայ գետը և սփռւում նրա ափերով. դինին, օղին շատ առատ են. շատ խմում են և բաւական ծախում։

Գիւղից վերև արձանացած է մի քարափ, որի տակից հուժկու կերպով ժայթքում է երկու Ջրաղացի, միապաղաղ, ընտիր վճիտ ջուր. այդ ազնիւ ջուրն են խմում և նրանից հանած անթիւ առուներով ջրւում են այգինները և բանջարանոցները։ Ձմեռը, երբ ստորերկրեայ ջուրը դուրս բղխելով, շփւում է դրսի ցուրտ օդի հետ, հսկայ աղբիւրի բացւածքի կամ ակի մօտ գոյանում է ահագին գոլորշի. այս ջրով շատ ջրաղացներ են բանում, որոնք ամբողջ ձմեռն էլ չեն դադարում, վասնզի աղբիւրի ջրերը երբէք չեն սառում, ուստի հեռաւոր գիւղերից ձմեռը այստեղ աղուն են բերում աղալու, որովհետև իրանց գետերի առուներով բանող ջրաղացները չորս հինգ ամիս սառած կանգնում են։ Այս աղբիւրի ջրերը գնալով այգինների մէջ մի երկու տեղ բարձր ապառաժներից թափւում են շատ գեղեցիկ ջրվէժներով։

Շնհէրի կեդրոնում կայ նախնիքներից կառուցւած մի փառաւոր, քառասիւն եկեղեցի, այժմ շատ անշուք և անխնամ վիճակի մէջ, որ չէ վայելում մեծ և համարեա հարուստ գիւղին։ Գիւղի ծայրում կայ դարձեալ գմբէթաւոր մի սիրուն վանք, որ հին ժամանակ կուսանոց է եղել, այժմ ամայի և կիսաւեր։ Սրա մօտ շինւած է բաւական յարմարաւոր դպրոցական շէնք, որ դժբախտաբար մի բաւարար վիճակի դեռ չի հասել. բանն այն է, որ այս բոլոր գիւղերում մի լուսաւոր առաջնորդող քահանայ ոչ մինում չը կայ, թէև ամենքն էլ ունեն մի-մի ծխականաբներ։

Ամբողջ Սիւնիքի վիճակում մի հատ միջնակարգ դպրոց, աւարտած քահանայ չը կայ, նոյն իսկ Գորիս քաղաքում. դա շատ ցաւալի և այս երկրի խիստ խաւար դրութեան մի գլխաւոր պատճառն է։ Շնհէրից քիչ դէն Ներս գիւղն է, հարիւր տուն, որ Որոտնայ ձորի վերջին հայ գիւղն է և ամեն կողմից նման է Շնհէրին, միայն աղօթատունը

իսպառ անշուք է։ Ուրեմն հին դարերում իր լուսաւոր մենաստաններով պանծացող Որոտնայ ձորի ոչ մի գիւղում ոչ դպրոց կայ, ոչ ուսեալ քահանայ. բոլոր վանքերը և անապատները աւեր և ամենից նշանաւոր երեքը ճակատագրի ծաղրանքով այժմ ծառայում են որպէս բինա, այսինքն գոմանոց, ձմերոց, որ են՝ նոր ամայացած, ճարճատուած, կիսաքանդ Տաթեւի մայրավանքը, Մեծ Ա.Յակապատը և Հարանց Ա.Յակապատը. այդ երեքն էլ այժմ գոմեր են։

Որոտնայ գետը սկզբից՝ Գեղարքունի և Վայոց ձորի լեռներից մինչև Սիսեանով անցնելը կոչւում է Բազար-չայ և շատ առատ է կարմրախայտ յոյժ համեղ ձկներով։ Որոտնայ աւեր վանքից մինչև Խոտ գիւղը ձորի միջով անցնելով կոչւում է Որոտան, այնուհետև մինչև Արաքս կոչւում է Բերքուշատ գետ. այս վերջի երկու մասում կայ առատ սև և խոշոր ձուկ, բայց ոչ կարմրախայտ։

Այս էլ ասեմ, որ Որոտան, Որոտնայ բառերը աւելի գրական են, քան ժէ առանին գործածականն։

Եփկ. վ. Տէր Աւետիքեան.

ՆԱԴՄՈՆԻՅ

Մահուան XXV-ամեակի առիթով

Ես եկայ քեզ մօտ տառապած սըրտով,
Լըքեալ ու հիւանդ անթիւ հոգսերից
Եւ ասի ես քեզ. ես կապըրենք սիրով,
Փոյթ-եղբայր դառնանք, ընկեր վըշտակից։
Մենք նոյնն ենք սիրել մանկութեան օրում,
Պաշտում ենք այժըմ նոյն սըրբատեղին,
Ուրեմըն դիմենք այս խաւար կեանքում,
Ձեռք ձեռքի տըւած՝ լոյս-գաղափարին։

Եւ քո աչքերում կարդացի ես նոյնն.
Դու փընտրում էիր սէր, կարեկցութիւն,
Դու ևըս ծածկել յոգնեցիր ինչպէս
Դառըն արցունքներ կըրծքումդ անտես։
Բայց իմ հրաւէրը՝ լի ջերմ հաւատով
Դու չընդունեցիր սրտաբուխ խանդով...
Նրա մէջ դու կեղծիք պըտրտել ըսկսեցիր
Եւ անկեղծ սէրըս ահով մերժեցիր։
Ես յուսակըտուր տանջանքըս ծածկած՝
Մեղեցի ժայթքող անէծքը սըրտիս...
Եւ ձեռքըս չսեղմած—դէպի քեզ մեկնած
Լուռ, ամօթահար թողնում եմ ես ցած։
Եւ որպէս դարիպ շատունց հեռացած,
Հարազատների մըտքիցը կորած,
Եւ վերադարձին նոցանից մերժւած,
Շըրջում եմ դարձեալ գլուխըս ծըռած՝
Ես մենութեանակ այս եռող կեանքում,
Ինչպէս ամայի, խուլ անապատում։

Տարազ 1894 № 9. Զ. Բալուեան

ԱՅԾԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

1

Թոմասն ունէը մի չար այծիկ,
Մի մըկըկան ու չալ այծիկ—
Պոզերը ցից, միրուքը կախ,
Ինքն օյլենբակ ու միշտ անվախ։

2

Այծատէրը՝ փողի կարօտ՝
Այծը տարաւ Գերմանի մօտ.
Շնչին գումար ղրբաւ ձեռին,
Այծը գընեց Գերման քեռին։

3

Ինքըն իրան խնդաց Գերման
Ու ծիծաղեց Թոմասի վրան.
Նա քարշ տալով մըկըկանին,
Ընկաւ ճանապա՝ չիրուխ քեռնին։

4

Օրը տաք էր. յողնած Գերման
Հասաւ ահա գարեջրատան.
Նա նստելով՝ պարպեց մի շիշ,
Այծն էլ նայեց նրան ակնապիշ։

5

Շրշի մէկը երկու դառաւ—
Հա կոնծում էր քեռին ծարաւ...
Այծը կանգնած՝ խէթ-խէթ նա-
յում,
Մրկրկում էր ու զարմանում։

6

Այծի՝ թոկը ձեռքից թողած՝
Խրոմփացրեց քեռին նստած.
Այծըն ըզգաց պիւի հոտը
Ու սեղանին դրաւ ոտը։

7

Նա շշերի ծայրին կանգնեց,
Հաստ տիկնոջը ՚ սարսափեցրեց.
Հաստ տիկինը վախից գոռաց—
Ջարմնեց քեռին, ապշած մը-
նաց...

8

«Կորիր, կորիր, փուչ կենդանի,
Քեզ իմ տունը էլ չեմ տանի,
Որ վաղն էլ մի օյին հանես
Ու սրտաճաք դու մեզ անես...»

9

Այծը թէպէտ քօթակ կերաւ,
Բայց նա յետոյ ուրախ եղաւ,
Որ ապատւեց քեռու ձեռից,
Եկաւ իրանց տունը նորից։

Ցարթիւն Թումանեան

Մանկական Աշխարհ

IV տարի պատկերազարդ զարթ ամսաթերթ IV տարի

1912 թ. № Ցուցւար

Հրատարակւում է մանկակցութեամբ ժրաջան աշակերտուհիների եւ աշակերտների

Խմբագիր-հրատարակիչ՝ Ա.ՄԹԻՆ

Ադրես՝ Բ. դասարանի Թիֆլիսի 4-րդ գիմնազիայի

1883 Երեսնամեակ Աղբիւրի 1912

Դրոցական աշակերտի համար **Աղբիւրը** *տարեկան մէկ րուբլի։ Ամենքդ էլ, ընկերնե՛ր, ստացէք։*

Ընկերնե՛ր. Աղբիւրն արդէն մտաւ իր 30-րդ տարեշրջանը և, ինչպէս տեսնում էք, ձեր առաջն է Աղբիւրի 30-րդ Նոր-Տարւայ №-ը։ Այսքան տարիների ընթացքում երբէք լոյս չէ տեսել Աղբիւրի այսպիսի մի ստւար ու փայլուն №։ Մենք մեծ պատրաստութիւններ ենք տեսել Աղբիւրի այս 30-ամեայ յոբելեանական տարին հրատարակելու թէ Աղբիւրը և թէ Տարազը ա-

ւելի ևս ճոխ ու բազմաբովանդակ։

Աղբիւրի № 1-ը սրանից 30 տարի առաջ լոյս է տեսել 1883 թ. յունուարի 25-ին և այսօր, 30 տարին լրացնելով, Աղբիւրի № 1-ը լոյս է տեսնում յունուարի 25-ին 1912 թ.։ Այս առիթով մեր Գրական-Գեղագիտական Սալօնում գարնան Զատկից յետոյ լինելու է Աղբիւրի հանգուցեալ աշխատակիցների յիշատակին և մինչև օրս Աստուծոյ ողորմութեամբ ողջեըի պատւին գրական-երաժշտական մեծ հանդէս։ Երեկոյեան ժամը 5—8-ը փոքրահասակների համար, իսկ այնուհետև՝ մեծերի։

Մանկական աշխարհի բոլոր աշխատակիցներն ու բաժանորդները հրաւիրւում են այս մեր երեկոյթին։ Լինելու են և օտարազգի շատ երեխաներ իրանց ազգային հագուստներով և մասնակցելու են կոնցերտին։

Բարեհաճեցէք, նկատի ունենալ, ընկերներ, որ ձեզանից նրանք, որոնք չեն վերանորոգել բաժանորդագրութիւնը, ’ի հարկէ և չեն ստանալու Աղբիւր, Մանկական Աշխարհ և ոչ Տարազ, Թատրոն և Երաժշտութիւն։

Ամբիկ

* *
*

Այն ձվ է լալիս, այն ձվ է ողբում,
Կէս դիշերային խաւարի միջում.
Եւ նրա լացը որպէս մեղեդի,
Տիրապետել է անտառն ամայի։

Ահա լսւում է և մեղմ հեծկլտոց,
Ե՛ւ բաբախումը կուսական սրտի.
Ու ինձ թւում է, թէ իբր մի օձ,
Կոկորդս է սեղմում, ուզում է խեղդի։

Ո՛վ իմ Արարիչ, տուր ինձ զօրութիւն,
Դառնալ թևաւոր մի սիրուն թռչուն,
Սաւառնել այնտեղ, ուր կայ սուզ ու լաց,
Շոյել, փարատել սրտերը այրուած։

Կամ թէ մի հնար, նրանց տեղ լալու,
Նրանց վշտերը հոգով զգալու.
Մի նոր կեանք տալու կեանքերին մեռած,
Նոր հոգի տալու հոգոցը մարած։

Վ. աբսիկ

Սան. Կ. Հ. Բ. Ը. Որբանոցի։

Ա Ն Բ Ա Խ Տ Գ Ր Գ Օ Ն

(Հէքիաթ)

Գ... քաղաքի անկիւններից մէկում ընկած էր մի գետնափոր խրճիթ. ապրում էին այդ աղքատիկ խրճիթում մայր ու որդի։ Տղայի անունն էր Գրգօ. սա ամեն օր գնում էր մօտակայ գիւղը, ցախ հաւաքում, ծախում էր այդ ցախը ու օրւայ ապրուստը հայթայթում։ Բացի երկուսից կար մի շուն և կատու այդ խըրճիթում, որոնք քարշ էին տալիս չարաստանջ օրերը։

—Չ՛ը, Գրգօ, այդ ինչ ես փեշումդ փաթաթել. ճճ է ճճ, տօ տնաքանդ, մեր տունը քանդելու վրայ ես. հերիք չէ, որ այս շունն ու կատուն մեզ վրայ ծանրաբեռնըւած ին, հիմա էլ օձ ես բերել, թունաւորօ ձ։

Մի վախիր մայրիկ, սա թունաւոր օձերից չէ, սա մեր պատառը խլող չէ, ես շուտով կը հեռացնեմ։

Գրգօն այդ օձը քաղաք վերադառնալիս ճանապարհին ցրտից սառած էր գտել։ Գրգօն այսօր ուզում էր օձից բաժանւել. վեր է առնում հեռը, գիւղը գնալիս այն մտքով, որ ճամբին դաշտում կարձակի։ Ճամբին օձը լեզու է առնում ու սկսում է խօսել Գրգօի հետ։ «Դիտեմ, Գրգօ, ես օձերի թագաւորի աղջիկն եմ, գիտեմ՝ ինչքան կուրախանայ հայրս, եթէ գաս հետս մեր տուն. հայրս քեզ կը վարձատրի անթիւ անգին քարերով. դու էլ լաւ չես ապրում, արի գնանք. գիտեմ, Գրգօ, երբ կըգնանք, ինչ որ հայրիկս ուզենայ տալ, չը վերցնես. կասես. «Ես թամահուքիւն չունեմ ոչ մի բանի. մ/այն տւէք ինձ յիշատակ ձեր լեզւի տակի մատանին, որով և գոհ կըլինեմ»։ Գրգօն մնացել էր ապշած. նորից շարունակեց խօսքը օձը. «Գիտես, այդ մատանին ունի մի այնպիսի զօրութիւն, որ ինչ ուզենաս, իսկոյն կը կատարւի. օրինակ՝ ասես կուզեմ այս րոպէիս մի այնպիսի սեղան, ուր լինի ամեն տեսակ կերակուրներ. և այդպէս՝ ինչ ցանկանաս, իսկոյն կը կատարւի։ Պէտք է շարունակ պահել լեզւի տակին։

Գրգօն տուն էր վերադառնում, մատանին էլ լեզւի տակ, ճամբին ուզեց ստուգի, տեսնի՝ արդեօք մատանին ունի՞ այդպիսի մի զօրութիւն, թէ ոչ։ Ձիւղ փորձը ցոյց տւեց...

—«Մայրիկ, մենք երջանիկ ենք, մենք բախտաւոր ենք, վաղը կը գնաս մեր թագաւորի աղջկայ հնամատաքսութեանը, կասես, որ իմ տղայ Գրգօն լայաղէ անում ձեր աղջկայ հետ նշանելու. հասկանո՞ւմ ես»։

Պառաւը մնացել էր ապշած. մտածում էր. «Արդեօք տղաս՝ միակ ապրուստիս միջոցը, խելագարւե՞ց». պառաւ կինը ղլինքը

ծռած, լացակումած մնացել էր սառած։

—«Հը, ինչ է մայրիկ, ինչ կայ, չը լինի թէ սովորականի պէս հացդ հատել է»։ Գրգոն մատանին լեզուի տակից հանելով՝ ասաց. «Այս մատանին շինողի զօրութեանը զուրբան, կուզեմ այս րոպէիս մի այնպիսի սեղան, որ թագաւորն աչքով, հրաղով չը լինի տեսած»։

Առաւօտեան դեռ արևը չըծագած, թագաւորի տան առաջի մարմարեայ քարին նստած էր մի կին՝ շալումը փաթաթւած. երկար նստելուց յետոյ վերջապէս յայտնում է ներկայանալ թագաւորին։

—Գերափայլ թագաւոր, իմ տըղայ Գրգոն ցանկանում ա նշանւել քո աղջիկ Աշխէնի հետ, ինչ կասէք։

—Ես ինչ պէտք է ասեմ. թող Աստւած մուրազը կատարի. միայն կըգնաս կասես տղայիդ. ես կուզեմ նրանից մի պալատ շինւած զուտ արծաթից ու քարից. եթէ կը շինի, մեծաւուրախութեամբ, համեցէք, իսկ եթէ չէ, ես նրան սատիկ կըպատժեմ։

Գ... քաղաքի զարմանքը մեծ եղաւ, երբ քաղաքի մոռացած անկիւնում գտնւող խրճիթի տեղը մի վեց յարկանի պալատ էր կանգնած. մարդ նայելիս գլխարկըն էր ընկնում, արծիւը նայելիս աչքերն էր խփում ու թևին տալով օդերը ճեղքելով երկնային արարածներին պատմում պալատի գեղեցկութիւնը։

Գրգենց նախկին խրճիթի տեղը կանգնած էր մի պալատ՝ ադամանդեայ քարերով շինած, իսկ պալատից մինչև թագաւորի տունը շինւած էր մի հարթ ճանապարհ ոսկուց ու ադամանդ քարերով պատած։ Եօթ օր եօթ գիշեր Գրգօի ու Աշխէնի հարսանիքն էր։ Անցան. օրեր, ամիսներ։ Գրգօի փառքը երկար չը տևեց։

Բարի ու անմեղ ընտանիքում խարդախ, քսու ուենենգ բուն մտրացնում էր բունը, որպէսզի տապալել կարողանայ Գրգօի օջաղը։ Այդ բուն թագաւորի վեզիրներից մէկն էր։ Աշխէնը դադար չէր տալիս ամուսնուն, որ ասի, թէ ինչ է նշանակում լեզուի տակի մատանին։ Զար սատանէն յաղթող է հանդիսանում, ու Գրգօն մի երեկոյ պատմում է կնոջը։

Առաւօտեան Գ... քաղաքի մոռացած անկիւնն էլ այն էր, ինչ որ նախկինը, միայն չկար Գրգօն, շունն ու կատուն։ Գրգօն, շունն ու կատուն, թափառականի ցուպն էին ձեռքներն առել, թափառում էին քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ, սարէ սար՝ կորցրածը փնտռելու, դարդը երգելու։

Երկար թափառելուց յետոյ Գրգօն միակ ընկերների հետ դէմ էր ընկել մի մեծ ծովի։ Ծովի միւս եզրին երևում էր մի պալատ՝ շատ նման Գրգօի կորցրած պալատին։

—Իմ անբաժան ընկեր շուն ու կատու, կըգնաք այն պալատը, իմ մատանին այնտեղ է։

Իսկ մինչդեռ շունն ու կատուն պալատ հասան, կատուն սենեակի պալատներն էր քրքրում, իսկ շունը պարտիզումը կուչ եկած, այդ ժամին Գրգօն արցունքն աչքերին մէկ առաջ մէկ յետ էր վազում, անհուն գետի եզրին թափում էր իր ճիգը, լացում էր իր դարդը ու սիրտանք հայցում։

—Օհ, սիրելի ընկեր շնիկ. ես գտայ, ես գտայ. ազատել ենք մեր տէր Գրգօին, արագութեամբ ներս ընկաւ կատուն պարտէզը, որ երկար փնտրելուց յետոյ յաջողւել էր գտնել։

—Հիմա, շնիկ ընկերս, գիտէք ինչու ես պէտք տանեմ մատա-

նին։ Որովհետև ես վախենում եմ ծովով անցնելիս ձուկ կամ մի բան պատահի, վրայ թռչես բռնելու ու գցես ծովը, մեր Ջանքը կը խորտակես անհուն ալիքների տակ անհետ։

—Ոչ, կատուիկ, ես պէտք է տանեմ. այդպիսի մի բան չի պատահի։

Շունը շալակած կատուին անցնում էր ծովը. յանկարծ ծովի ալիքների հետ մի շատ գեղեցիկ ձուկ բարձրանալով ընթանում է շան առաջով, վրայ է թռչում շունը թէ բռնի, չի յաջողւում, ու մատանին ընկնում է ծովը անհետանում։

—Ջասայի՛, կըզցես ծովը։ Հիմա ձեր ենք գնում և ինչո՞ւ, ինչ կը պատասխանենք մեր տէր Գրգոին, կրկնում էր շարունակ կատուն ու արցունք թափում հեղեղի պէս։

Գրգօն, շունն ու կատուն, օր ու գիշեր, ծովի եզերին խելագարի նման լացում էին ձէն-ձէնի տըւած. նրանց ձայնակցում էր ծովի ալիքների յորձանքը, հեռուն սլանալով. պատմում էր պատահողին Գրգօի կորցրած փառքը, պատմում էր չար բուի խարդախութիւնը, պատմում էր անտէր ու անպաշտպան պառաւի ցաւն ու դարդը։

Յարութիւն Թաւաքալեան
Գանձակի քաղ. դպ. 5 դ. աշակ.

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

Սիրելի ընկեր Ամբիկ

Նախ և առաջ շնորհաւորում եմ Նոր Տարին, Քրիստոսի Ծնունդն և Մկրտութիւնը, ցանկանալով հրկար կեանք և յաջողութիւն գործիդ։ Ընկեր Ամբիկ, հոգով ցանկանում եմ, որ իմ այս հանելուկը տպագրւի Մանկական Աշխարհի էջերում իբրև զարճալիք։ Եթէ իմ այս ցանկութիւնս կը կատարւի, ապեն մի համարին կուղարկեմ հանելուկ կամ տառախաղ...

Մէկ եղանը դարձեալ կերակրում էր, իսկ միւսին ոչ...

Դէ, ով կարող է ասել, որ եղն էր քաղցած ճնում և ինչո՞ւ։

Առայժմ անծանօթ ընկերդ՝

Վ. արդան Մելիքեան

Աշակերտ ե բաժանման Իգդիրի քաղաքային դպրոցի

ՀԱՆԵԼՈՒԿ

Գիւղացին մի գոյգ եզով ամառայ շոգին վար անելիս, շատ աշխատեցրեց և չարչարեց նրանց։ Վերջապէս նա բաց թողեց նրանց արածելու մօտակայ անտառում, իսկ ինքն էլ պառկեց, քնով անցաւ։ Անտառի միջից մի քաղցած գայլ յարձակւեց եզների վրայ, մէկի պոչը կտրեց և փախաւ։ Անուշ քնից զարթնելով գիւղացին գնաց եզները բերելու, բայց շատ զարմացաւ, երբ տեսաւ որ մէկի պոչը չը կայ, գայլը յափշտակել է։ Սրամիտ գիւղացին, ժամանակին իր վիշտը ողբաց... Եւ այնուհետև ամեն ամառ օր երբ եզները տանում էր գիւղացին արածացնում, տուն բերելուց

ԽԵՂՃ ՅՈԼԱԿԸ

Մօտեցել էին Ծննդեան տօնները։ Ամեն մի մարդ աշխատում էր մի որևիցէ բանով բաւականութիւն տալ իր երեխային. մէկը տօնածառ, մի ուրիշը կողովը լցրած զանազան տեսակ քաղցրեղէններով իրեն տունն էր շտապում։ Միայն խեղճ Յոլակի մայրն էր, որ տխուր, տրտում, գլուխը կախած գնում էր տուն։ Տանը ոչ մի կոպեկ չը կար. նա ճնացել էր շտարած։ Գում էր, որ մի փոքրիկ բանով գոնէ պէտք է ուրախացնէր երեխային, բայց միջոցը չէր ներում։ Արդէն երկու օր էր ոչինչ չուտելու։ Սակայն կար ժամանակ, որ իր տանը միշտ շքեղ ու փայլուն տօնածառ էր լինում, անթիւ երեխաներ ուրախանում էին և մեծ բաւականութիւն ստանում։ Իսկ այժմ չունէր նա մի քանի կոպեկ, որ կարողանար մի չնչին բանով երեխային ուրախացնել։ Թափառում էր խելագարի նման։ Ճանապարհին նա գտաւ մի ծառի ճիւղ, վերցրեց, բերաւ և փաղաքշելով, համբուրելով տւեց Յոլակին ու ասաց.

«Ահա որդի, քեզ տօնածառի փոխարէն։ Աստւած ողորմած է, ձեռքիս կարը երբ վերջացնեմ, այն ժամանակ դու կը ստանաս և տօնածառիդ համար գտուվարաղ զարդեր ու գոյնզգոյն մոմեր էլ։

Յոլակը ճիւղը գրկեց, ինչպէս մի թանգագին ընծայ և ապա լինքն ընկաւ մօր գիրկը և անվերջ ջերմ համբոյրներով նրա սպրտնած երեսը կարմրացրեց։

Իսկ գիշերը երբ քնեց, երազումը տեսաւ՝ ինչպէս հրեշտակը երկնքից իր համար զանազան խաղալիքներ բերաւ, որոնց թիւ ու համար չը կար։

Զաւուճի Մաւիկոնեան

Աշակերտ Թիֆ. 3 Իգական գիմ.

ՏՕՐԻ ԵՒ ՄԱԼԻ

Բառոյագիտական վէպ

իր պատանի բարեկամների համար գրեց

ՖՐԱՆՑ ՀՈՖՄԱՆ

Գերմաներէնից թարգմանեց

ԴԷՈՐԳ ՀԱՐԽՈՒՅԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Մեր ծերունազարդ նահապետ-թարգմանիչ բանաստեղծ ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԸ Աղբիւրի երեսնամեակի առիթով ընծայաբերել է հայ մանուկներին գերմանական մանկական գրող տիեզերահռչակ Փրանց Հոֆմանի ամենանշանաւոր գրւածքներից մէկը՝ Տօքի եւ Մալի, բարոյագիտական վէպի հայերէն թարգմանութիւնը, որ արել է ինքը, մեր նահապետ-թարգմանիչը գերմանական բնագրից։

Տօքի և Մալի այս վէպը տպագրում ենք իբրև յաւելուած Աղբիւրի, որ տարւայ վերջը կը կազմէ մի տուար գիրք և բաժանորդները այն ժամանակ կը տանեն թէ Փրանց Հոֆմանի և թէ նրա արժանաւորագոյն թարգմանիչ Գէորգ Բարխուդարեանի պատկերները սրանց կենսագրութիւնների, գրական գործունէութեան նկարագրերի և գրքի շքեղ շապկի հետ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԲՈՒԻ ՈՐԴԻՆ

Քրիստոնէական մեծ մայրաքաղաք Կալկաթայից կէս ժամ հեռու կայ մի շատ գեղեցիկ և հիանալի տեղ, որի անունն է Գարտէն Րէախ: Հուգլի գետի ջրերով ոռոգւած, ծածկւած ստուէրի ծառաստաններով, հիանալի պարտէզներով և գեղեցիկ ամարանոցներով, պատած արմաւենու և բանիանի անտառներով, կտրտած կարկաչուն առւակներով նմանում է Գարտէն Րէախը կախարդական աշխարհին կամ դրախտին, որ երկնքից վայր է ընկել երկրի վրայ: Այստեղ բնակւում են տարւայ տաք եղանակին Կալկաթայի հարուստ վաճառականները, իշխանները և մեծատունները, որոնց իշխանական կարողութիւնը թոյլ է տալիս նրանց ձեռք բերել այս դրախտից մի մասը իրանց համար սեփականութիւն: Այստեղ բնակւում են անչափ հարուստ նաբոբներ, որոնք փախչում են Կալկաթայի անտանելի դիրքից և նրա փոշիով լիքը փողոցներից, որ այս կախարդական կղզու ստէրոտ անտառներում շնչեն աւելի զով և անուշ օդը: Այստեղ բնակւում էր նմանապէս Պ. Վէստէրն, ամենահարուստ նաբոբներից մէկը իր ամուսնու և էդւարդ որդու հետ, որ այն ժամանակ, որից սկսւում է մեր պատմութիւնը, հազիւ թէ տասներկու տարեկան լինէր:

Պ. Վէստէրնի կալւածքը համարեա թէ ամենալաւն էր Գարտէն Րէախում: Նրա պարտէզներն էին ամենաընդարձակները. նրա ամարանոցը նման էր մի շքեղ պալատի և զարդարւած էր ամենաթանկագին գանձերով հին և նոր աշխարհի. և հարիւրաւոր ստրուկներ հետևում էին նրա ամենաթեթև նշանին, նրա յոնքերի հազիւ նշմարելի շարժմունքին: Բայց այդ ամարանոցը, այդ գեղեցիկ տաք երկիրների շքով ծաղկած այգին, իր միլիոնաւոր ծաղիկներով և զով ու անուշահոտութեամբ լի անտառներով, իր

---

*) Նաբոբ կոչւում են Հնդկաստանում պաւառների կառավարիչները, այլև այն մարդիկ, որոնք այնտեղ հարստացել են:

(Ծ. Թ.)

շատ բաներով և ջրվեժներով կազմում էր միայն ամենափոքր մասը այն անչափ մեծ հարստութեան, որի տէրն էր Պ. Վէստէրն։ Կալկաթայում ունէր նա Գանգէս գետի ափում երկրորդ ապրելի և շքեղ պալատ, որի լայն և ընդարձակ առաջին յարկը լի էր նրա գործակատարներով, հաշուարարներով, նաւապետներով ու նաւաստիներով։ Առաւօտից մինչև երեկոյ գնում ու գալիս էին այստեղ գործատէր մարդիկ։ Հեռաւոր երկիրներից գալիս էին նաւեր, բեռնաւորուած թանկագին ապրանքներով և դատարկում էին իրանց հարուստ բեռը Պ. Վէստէրնի ամբարների մէջ։ Միւս-նները դարձեալ գնում էին, բեռնաւորուած նրա կալկաթայի շրջակայքում ունեցած լայնատարած մնկարանների բերքերով, որոնց մշակել էր տալիս նա իր բազմաթիւ ստրուկներին իր վերակացուների հակողութեան տակ։ Ինքը շատ սակաւ էր մտածում իր անթիւ գործերի մասին. դրա համար ունէր նա մարդիկ. և լաւ գիտէր, որ կարողէ հաւատալ նրանց հաւատարմութեանը ուխղճմտանքին։ Որովհետև աւուր էր նրա աչքը և ամենափոքր խաբէութիւնն անգամ չէր թաքկնում նրա բազէի աչքերից։

Անփոյթ ու անկայք եկել էր Պ. Վէստէրն քսան կամ երեսուն տարի առաջ Անգլիայից կալկաթա, որ հեռաւոր Հնդկաստանում որոնել իր բաղդը։ Թէպէտ անփոյթ ու անկայք էր նա, բայց հարուստ էր խմաստութեամբ, հմտութեամբ և աշխատասէր հոգով։ Համարձակ սրտով և անխոնջ աշխատութեամբ ընկնում էր նա գործերի յորձանքի մէջ, և գտաւ այն բաղդը, որ որոնում էր։ Նրա համարձակ բռնած գործերը յաջողում էին նրան. ինչ որ ըստկսում էր, բոլորն էլ բաղդաւոր էր վերջանում նրա համար, և տասը-տարուց յետոյ արդէն ամենահարուստ վաճառականներից մէկն էր կալկաթայում։ Նա կրկնապատկից իր հարստութիւնը ամուսնանալով մի գաղթականի աղջկայ հետ, որի կալւածները չափւում էին ոչ թէ օրաւարով, այլ մղոններով, և մի քանի տարուց յետոյ քաշուեցաւ նա Գարտէն-Րէախ, իր կալւածքը, որ հիմա ուրիշներին իր համար աշխատեցնէ և իր անխոնջ աշխատանքի պտուղները հանգստութեան մէջ վայելէ։

Բաղդը, այսինքն այն մեծ հարստութիւնը, որ Պ. Վէստէրն որոնում էր, ինչպէս տեսնում ենք, գտել էր. բայց միևնոյն ժամանակ, իր անդադար աշխատանքների մէջ իր ոսկու տակառները լցնելու համար, կորցրել էր մի բան, որ աւելի լաւ էր, քան թէ նրա բոլոր գանձերը—այն է՝ տաք, կակուղ ու բարի սիրտը, որ առաջ զարկում էր նրա կրծքի մէջ, քրիստոնէական սիրոյ զգացմունքը, որ ոգևորում էր նրան, քանի որ նա դեռ երիտասարդ էր։ Քանի որ մաքառում էր նա չքաւորութեան հետ, բարի

մարդ էր, բայց որքան որ հարստացաւ, այնքան էլ խիստ, փառասէր, հպարտ ու ինքնակամ դարձաւ։ Նրա ծառանները, սպրուկները դողում էին նրա առաջ, բայց ոչ մէկը նրանցից չէր սիրում նրան և միայն ահից կատարում էին իրանց պարտաւորութիւնները, որոնց համար վարձ էին ստանում իրանց պարոնից։ Պ. Վէստէրն վարւում էր նրանց հետ ինչպէս գործիքների հետ։ Թէպէտ բաւական փող էր տալիս նրանց, բայց ոչ մի ժամանակ չէր ցոյց տալիս բարեկամական կարեկցութեան ու մարդկային սիրոյ նշան։ Ի՞նչ զարմանք ուրեմն, որ նա ոչ մի տեղ սէր չէր գտնում, որովհետև ոչ մի տեղ սէր չէր ցանում։ Ոսկու հնչիւնը քարացրել էր նրա սիրտը, և ցած հնազանդութիւնը թշուառ մարդկանց, որոնք նրա հարստութեան առաջ մինչև դեռին խոնարհեցնում էին իրանց գլուխները, սովորեցրել էր նրան ատել մարդկութիւնը։ Այսպէս ահա աղքատ էր նա իր բոլոր հարստութիւններով, որովհետև սէրը պակաս էր նրան—ջերմ քրիստոնէական սէրն եմ ասում, որ կենսատու արեգակի պէս ձլեցնում է մարդու սրտի համար սիրուն ու անուշահոտ բաղդի ծաղիկները։

Մի բան միայն ճշմարիտ սիրում էր Պ. Վէստէրն, և դա իր տղան էր. բայց ափսոս, որ արժանի չէր էդուարդը այդ սիրուն։ Մեծացած հարստութեան մէջ, երեխայ ժամանակ դաստիարակւած թոյլ մօրից, որ չունէր այնքան հաստատ կամք, որ ճնշէր իր որդու վաղ արթնացած չար հակումները, շրջապատած սպրուկներով, որոնք այդ տղայի ամեն ինքնահաճ և անպիտան ցանկութեանը պիտի հնազանդէին, եթէ չէին ուզում մարտկով ծեծուիլ կամ աւելի խիստ պատժուել։ Մի խօսքով, այդ տղան զարձիլ էր փոքր բռնակալ, որի խստութիւնից աւելի էին վախենում նրա ծառանները, քան թէ նրա հօր բարկութիւնից. սա թէպէտ հպարտ և մարդատեաց էր, բայց էլի գոնեա արդարադատ էր։ Բոլոր տունը դողում էր այդ փոքր տղայի առաջ. նրա մօտից փախչում էր ամեն մարդ, ով որ նրա հետ կապւած չէր. բոլոր սպրուկները ոչ միայն վախենում էին նրանից, այլ և ամենքը ատում էին նրան ու զզւում նրանից։ Շուտով աւելի մօտիկ կըծանօթանաք նրա հետ։

Աւազոտ լայն ճանապարհի վրայ, Պ. Վէստէրնի պալատի նման տան առաջ մի առւօտ կանգնած էր մի թեթև փոքրիկ կառք։ Ներսից կապած էր կանաչ թաւիշ և ոսկէ ինջերով ու ժապաւէններով առատ զարդարւած. վերևից փռած էր կանաչ մետաքսէ հատ ծածկոց կողմերին վարագոյրներով, որոնք ուզած ժամանակ կապւում էին մետաքսէ թելերով, որ արեգակի ճառագայթները չմտնէին կառքը։ Կառքի մօտ կանգնած էին երկու

տղայ, մինը մութը պղնձէգոյն, միւսը սև կաշիով։ Երկուսն էլ կըլինէին համարեա թէ տասն և չորս տարեկան, և էդւարդին, իրանց փոքր մասսայի (պարոնի) խաղաընկեր, ծառայ ու տղրուկ էին, և նա ամեն բան կարող էր անել, ինչ որ իր կամքը տար։

Զընայելով նրանց մուգ կաշուն, պէտք է այդ երկու տղերանց սիրուն անուանենք։ Նրանց հասակը վայելուչ ու բարձր էր, աչքերը լի էին կրակով և երեսի գծերը թէպէտ կանոնաւոր չէին, բայց զզւելի էլ չէին։ Տօբին, մութը պղնձէգոյն մալայ տղան, ունէր մինչև անգամ նուրբ ու գեղեցիկ դէմք և նրա սև աչքերը փայլում էին շատ կենդանի կերպով. նրա կարմիր բերանը այնպէս թարմ էր, որ մարդ իսկոյն մոռանում էր նրա կաշու մուգ գոյնը։ Մալին, նեգրը (աֆրիկացին) այդքան գեղեցիկ չէր, բայց ունէր բարի ու անուշ դէմք և երբոր ծիծաղում էր, մարգարիտների պէս փայլում էին նրա սպիտակ ատամները ծիրանի շրթունքների մէջ։ Իրանց կարմիր բաճկոններում և լայն ձիւնի պէս սպիտակ վարդիկներում երևում էին այդ երկու տղերքը շատ սիրուն ու զարդարուն։

—«Փոքր մասսան այսօր շատ է ուշանում», ասաց Մալին կոտրտած անգլիերէն լեզուով իր ընկերին։ «Վաւ քնած է։—Նրան փոյթ չէ, որ Մալին ու Տօբին այստեղ կանգնած սպասում են նրան ու խորովւում արեգակում։»

—«Թող քնի», պատասխանեց Տօբին Մալային։ «Մեզ համար աւելի լաւ է այստեղ կանգնած լինել, քան թէ փոքր մասսային կառքով վազեցնել արեգակում»։

—«Ճշմարիտ է», ասաց Մալին. «վատ բան է ձիու պէս մանծել փոքր մասսային։ Տօբի, ինչի՞ մենք էլ մասսաներ չենք»։

—«Որովհետև մենք փող չունենք. Մալի, յիմար սևամորթ», ծիծաղելով ասաց Տօբին և բարեկամաբար խփեց իր ընկերոջ ուսին։ «Հա, եթէ մասսայի տունը քեզ պատկանէր և ինձ պարտէզը. այդ բանը, կարծեմ որ, դուր կը գար մեզ»։

Մալին ժպտաց և դլխով արեց, որով յայտնեց իր համաձայնութիւնը նրա կարծիքի հետ։ Բայց իսկոյն էլի ծանր դէմք ընդունեց և ասաց տխուր ձայնով. «Մալին նրանով էլ կը բաւականանար, եթէ կարողանար գնալ տնկարանը ղահուէ քաղելու, շաքարեղէն կտրտելու և կինամոն ժողովելու։ Այս աւելի լաւ է, քան թէ ձի լինել։ Ձին չորս ոտն ունի, իսկ Մալին միայն երկու, ուրեմն ինչի՞ պիտի նա ձի դառնայ ու մտրակով ծեծւի փոքր մասսայից։ Այս շատ վատ է, Տօբի»։

—«Ի հարկէ», պատասխանեց սա։ «Բայց էլի այստեղ աւելի լաւ է, քան թէ փուռը կոխեն խորովելու, կամ վերակացուներից այն-

պէս ծեծուել, որ կաշին կտոր կտոր լինի, կամ թէ շաքարաղացը գնալ, ինչտեղ երէկ խեղճ Նապիի ձեռը տրորուեցաւ ելկանքներու տակ։ Գիտես, Մալի, նրա ձեռը կացնով պիտի կտրէին»։

Մալին սարսափեցաւ։

—Խեղճ Նապի, շատ բարի տղայ է նա և Մալիի հետ էլ միշտ լաւ է, ու հիմա ձեռը կորցրեց։ Խեղճ Նապի։ Բայց նա փոքր մասսայի ձին չէ, նա չարդւում ու ծեծւում է մտրակով, նրա մազերը չեն փետում, ներսն ասեղներով չեն ծակոտում։ Ահա, աւելացրեց նա և վեր քաշեց բաճկոնի թեւը, ահա, Տօբի, դեռ էլի կարող ես տեսնել, ինչպէս ծակոտել է ինձ մասսան ասեղներով միմիայն ծիծաղելու համար։ Ո՛չ, տնկարանումը աւելի լաւ է, քան թէ փոքր մասսայի մօտ։

—Խեղճ Մալի, ասաց Տօբին կարեկցութեամբ։ Բայց ահա տես, ես էլ լաւ չեմ պրծել։ Նա ձեռս այրեց վառօդով և ծիծաղում էր, այն ինչ ես կսկծից գոռում էի բարձր ձայնով։ Կաշիս դեռ էլի այրած է։

—Մասսան վատ մարդ է, ասաց Մալին տխուր ձայնով։ Բարի Աստուածը մի օր կը պատժէ նրան։ Սև քահանան ասում է, որ բոլոր չար մարդիկ մի օր կը պատժւին բարի Աստծուց։

—Լռի՛ր, Մալի, գալիս է, շտապով ու կամաց շշնջեց Տօբին, դլուխը տան կողմը դարձնելով և ականջ դնելով։

Մալին զարհուրեց և շուտ բռնեց կառքի լուծը. բայց եկողը էդւարդը չէր, այլ մի սև ստրուկ, որ դուրս եկաւ տանից։

—Փոքր մասսային էք սպասում, հարցրեց նա։ Նա դեռ պառկած է անկողնում։ Դեռ շուտ չի դայ։

Այս ասելով հեռացաւ նա և տղերքը նորից մօտեցան միմեանց։

—Ո՞վ պիտի պատժէ փոքր մասսային, ասաց Տօբին։ Աստուած հարուստ նաբոբներին ոչինչ չէ անում։ Նա միայն խեղճ ստրուկներին է պատժում։

—Ո՛չ, նա հարուստ մարդուն էլ է պատժում, պատասխանեց Մալին եռանդով։ Սև քահանան գիտէ այդ և ինձ էլ ասել է, որ երբ հարուստ մարդը մեռնում է, նրա հոգին գնում է դժոխքը։

—Իսկ եթէ հարուստ մարդը բարի՞ էր, Մալի, հարցրեց Մալայ տղան ծաղը անելով։

Մալին շփոթւեցաւ։

—Ես ոչ մէկ նաբոբ չեմ ճանաչում, որ բարի լինի, ասաց նա։

—Այո՛, դու միայն մեր մեծ ու փոքր մասսաներին ես ճանաչում, պատասխանեց Տօբին։ Սրանք վատ են։ Բայց մայրս պատ-

մել է ինձ, որ լաւ մասսաներ էլ կան. եթէ ուզենան, կարող են սրանք էլ լաւ լինել։

—Ուրեմն ես, աղօթք անենք, որ փոքր մասսան բարի մարդ դառնայ և Տօքիի ու Մալիի հետ էլ այսպէս անողորմ չը վարւի, ասաց Նեգր աղան։ Ես նրան ոչինչ վատ բան չեմ ցանկանում. ես չեմ ցանկանում, որ նա դժոխքը գնայ։ Դժոխքը շատ վատ է, ասում է սև քահանան, և նա նոյնպէս ասում է, որ Մալին պիտի չը ցանկանայ չար բան այն մարդուն, որ նրան վատութիւն է անում։ Լաւ, Մալին աղօթք կանէ մասսայի համար, որ Աստուած նրան բարի մարդ դարձնէ։ Բարի աղօթքը լաւ է օգնում, ասում է սև քահանան։

—Դեռ շատ աղօթք կանես, մինչև որ փոքր մասսան բարի մարդ կը դառնայ, պատասխանեց Տօքին փայլուն աչքերով և մի և նոյն ժամանակ բռնները բարկութեամբ սեղմելով։ Ես քեզ պէս համբերող ու հեզ չեմ։ Եթէ կարողանայի, ինչպէս որ ցանկանում եմ, կը պատժէի փոքր մասսային, ինչպէս հարկն է։ Տօքին զօրեղ է նրանից, նրա բազուկը պինդ է և սիրտը լի արիութեամբ։ Բայց Տօքին չի համարձակւի, որովհետև մասսայի հայրը կը սպանէ նրան։ Բայց համբերիր, Մալի, երբ որ ես մի երկու տարով աւելի մեծ կլինեմ, այն ժամանակ կը փախչենք։ Մայրս պատմել է ինձ, որ ծովի վրայ մեծ-մեծ նաւեր են մանգալիս, որոնք Մալայներին են պատկանում, այնպէս մեծ և ամուր, ինչպէս սպիտակներինը։ Այն ժամանակ կը պատերազմենք սպիտակների, մասսաների դէմ ու մեր վրէժը կառնենք, և այն ժամանակ վայ փոքր մասսային, եթէ Տօքիի ձեռը կընկնի։

—Ամօթ քեզ, Տօքի, այդ ինչ վայրենի մտքեր են, ասաց հեզ Նեգր աղան։—Դու պիտի գնաս սև քահանայի մօտ և սովորես նրանից, թէ ինչ է ասում մեր բարի Փրկիչը իր երեխաներին։ Նա ասում է, որ բոլոր մարդիկ նրա զաւակներն են, ինչպէս սևը, նմանապէս էլ թուխը։ Դու նրանից աւելի լաւ բան կը սովորես, քան թէ ինչոր հիմա խօսում ես, Տօքի։

Ամաչած նայեց Տօքին գետնին։

—Լաւ գիտեմ, Մալի, ասաց նա. բայց ինչի փոքր մասսան չէ հետևում քո սև քահանայի խօսքերին։ Միթէ մենք պարտական ենք բարի լինել, երբ որ նա չար ու անողորմ է։

—Այո, մենք պարտական ենք այդպէս լինել, պատասխանեց Մալին ծանր ղէմքով։ Մեր ամենաբարի Փրկիչը այդպէս է հրամայում մեզ։ Մենք պէտք է սիրենք նրանց, որոնք մեզ ատում են։ Այս աւելի լաւ է, քան թէ վրէժխնդիր լինել։ Այս բանը դու միշտ մտքումդ պահիր, Տօքի. այն ժամանակ կը սիրէ

քեզ մեր բարի Փրկիչը, և դու կերթաս երկինքը, ինչտեղ էլ տարուկները չը կան, այլ միայն հրեշտակները են։

—Լաւ, կը փորձեմ, կարճ կտրեց Տօբին. բայց մի և նոյն ժամանակ երևում էր նրա կամակորութիւնը։ Փայլուն աչքերը լսում էին ուրիշ լեզու։

Տօբին ու Մալին մի փոքր ժամանակ կանգնած էին խորը մաքերի մէջ։ Մալիի մաքերը հեղ ու հաշտ էին, բայց Տօբիի սրտում պատերազմում էր մի Մալայի բնածին վրէժխնդրութիւնը ամենալաւ զգացմունքների հետ, որոնց զարթեցրել էր նրա մէջ Մալիի հաշտարար խօսակցութիւնը։ Նա զգում էր իր մէջ տարաձայնութիւն ինքն իրան հետ, և այդ պատճառով շատ ուրախացաւ, երբ նա մի առիթ գտաւ ուրիշ ուղղութիւն տալու իր մաքերին և այդպէս մի հաբւածով ղէն ձգելու իր ներքին անհանգստութիւնը։

—Այնտեղ նայիր, Մալի, յանկարծ ձայն տւեց նա։ Ի՞նչ գեղեցիկ թիթեռն է։

Մալին նայեց այն կողմը։ Մեծ ծաղկոցի վրայ, որ կպած էր աւազոտ ճանապարհին, ճախրում էր այն գեղեցիկ համարեա ոտնաչափ թիթեռներից մէկը, որոնք հազւադիւտ չեն Հնդկաստանում, և կարճ ժամանակից յետոյ նստեց մի անուշահոտ կարմրափայլ ծաղկի վրայ, որ իր երկայն կնճիթով ծծէ նրա քաղցր մեղրածուծը։ Նա հեռու չէր նստած տղերանցից, և սրանք կարողանում էին պարզ տեսնել նրա թևերի աննկարագրելի շքեղութիւնը, որոնք արեգակի ճառագայթների մէջ փայլելով, կարծես թէ մրցում էին թանկագին քարի փայլման հետ։

—Ես պիտի բռնեմ նրան,—ասաց Տօբին։ Այնպէս հանդարտ նստած էր, որ նա կարող չէ փախչել ինձանից։

—Ո՛չ, մի՛ անիր այդ, Տօբի, կանչեց Մալին վախեցած։ Եթէ մասսան գայ և քեզ չը գտնէ կառքի մօտ, այն ժամանակ նա սաստիկ կը բարկանայ և մտրակով կը ծեծէ քեզ։ Ո՛հ, Տօբի, մի՛ գնա ծաղկոցը. դիտես, որ այդ սաստիկ արգելւած է։

—Ոչինչ, պատասխանեց Տօբին։ Կը բռնեմ և մասսային կը տամ։ Այն ժամանակ նա էլ չի հայհոյի ինձ։

Թէպէտ Մալին շատ աշխատեց յետ պահել այդ բանից իր ընկերին, բայց Տօբին, խլւելով, փախաւ նրա ձեռից և աշխատում էր զանազան պատյաններով մօտենալ թիթեռին։ Երբ նա մի քանի քայլ մօտ էր գնացել նրան, աշխատում էր, որ իր ստւերը չընկնի թիթեռի վրայ և չը վախեցնէ։ Յետոյ կամաց և զգոյշ մեկնեց ձեռը և միևնոյն վայրկեանին, երբ այս գեղեցիկ միջատը ծալւեց իր մեծ թևերը, յանկարծ բռնեց նրան։

—Բռնեցի, կանչեց նա ուրախացած և շուտ սխմեց բռնած թիթեռի կուրծքը։ Է՛յ, ինչ սիրուն է, Մալի։ Ե՛կ այստեղ, տես։

—Շուն ստրուկ, լսեցաւ հիմա մի տղայի պարզ, բայց բարկացած ձայնը տան դռներից, ուր մտել էր նա Տօբիից ու Մալիից չը տեսնւած, որոնք իրանց բոլոր ուշադրութիւնը ուղղել էին թիթեռի վրայ։ Շուն ստրուկ, ինչպէ՞ս համարձակւեցար կառքից հեռանալ և ծաղկոցի մէջ դէս ու դէն վազվզել։ Այստեղ ե՛կ, այստեղ, դու թուխ գորտ։ Պէտք է մտրակով ծեծեմ քեզ, մտրակով ծեծեմ, մինչև արիւնդ դուրս գայ. անասո՛ւն։

Հէնց որ այս ահեղ ձայնը լսեցաւ, Տօբին և Մալին սարսափած աղաղակեցին. «Փոքր մա՛սսան»։ Յետոյ Մալին ընկաւ էդւարդի ոտները և բազկատարած աղաչում էր նորել խեղճ Տօբիին։

—Մասսա, նա ձեզ համար բռնեց այն գեղեցիկ թիթեռը։

—Այդ ոչ ոք չէ հրամայել նրան, գոռաց էդւարդը սև տղայի վրայ։—Հարիւր անգամ արգելել եմ ձեզ, անզգաաներիդ, վարդարանները ու ծաղկոցները չը կոխոտել։ Այստեղ ե՛կ, Տօբի։

Տօբին ատամները կրճտեց, ձգեց մի բոցեղէն հայեացք իր փոքր պարոնի վրայ և կարծես, շատ փափագում էր չը հնազանդել նրան։ Թէպէտ նա միայն մի վայրկեան ուշացաւ. բայց այդ կարճ միջոցն էլ բաւական էր արդէն էդւարդի բարկութիւնը կատաղութիւն դարձնելու։ Նա վազեց Տօբիի վրայ, խփեց բռնով երեսին, կոխոտեց ոտներով և յետոյ մի քանի անգամ պինդ շրխկացրեց ուսերին մտրակով, որ ձեռին ունէր։ Տօբին ամենևին կսկծի ձայն չհանեց։ Համբերութեամբ տանում էր նա այդ փոքր բռնաւորի անսիրտ չարչարանքները և միայն փնթփնթում էր քթի տակ։ Համբերութի՛ւն, համբերութի՛ւն, մի անգամ էլ ինձ կընկնի հերթը։

Բայց յետոյ պինդ գետնովը տւեց բռնած թիթեռը, կոխճըրտեց ոտներով և վերջապէս առանց մի խօսք ասելու դնաց կառքի մօտ, ուր լծւեցաւ Մալիի կողքին։

Փոքր Մալայի այս համարձակ, շտապած և, կարելի է ասել, մի փոքր յանդուգն վարմունքը նորից գրգռեց էդւարդի կատաղութիւնը։ Շուտ վազեց նա Տօբիի մօտ և հարցրեց կնճռած ճակատով և բարկութիւնից դողդոջուն ձայնով.

Ինչի՞ կոխեցիր թիթեռը, անասո՛ւն։

—Որովհետև իմ սեպհականութիւնն էր և դուք պիտի չը ստանայիք այն, պատասխանեց Տօբին հաստատ ձայնով և առանց երկար մտածելու։ Ինչի՞ ծեծեցիք ինձ մի փոքր սխալի համար, որ ես արի ձեզ այն գեղեցիկ թիթեռով ուրախացնելու համար։

Հիմա էլի ծեծեցէք, եթէ կամենում էք, բայց թիթեռը էլ չէք ստանայ։

Տգեղ ու վայրենի կերպով ծամածռեցաւ Էդուարդի դեղեցիկ երեսը Տօբիի այս խօսքերի վրայ։

—Շուն ստրուկ, գոռում էր նա, դու ուզում ես չը հնազանդե՞լ ինձ, քո պարոնին։ Ա՛ռ այս, այս էլ, այս էլ։ Մեռի՛ր, Մալայ մուկ։

Եո՛ւե, կանչեց Էդուարդը մեռակը թխկացնելով։ Գոմ չէի վազում, այլ սողում էի։ Եո՛ւե, ասելի՛ ըաւե։

Եւ այնպէս կատաղած ծեծում էր նա Տօբիին մարակի կոթով, որ շուտով վազեց արիւնը խեղճ չարչարուած տղայի ճակատից ու այտերից։

Տօբին հիմա էլ համբերեց առանց մի ձայն հանելու, բայց

բարի Մալին կարեկցութիւնից աղաղակում էր բարձր ձայնով։ Մի անգամ էլ ընկաւ նա Էդուարդի ոտները ու դրկեց նրա ծընկները պաուեթիւն աղերսելով։

—Ախ, մնասա, խղճացէք խեղճ Տօբիին, ողորմեցէք, մնասա, Տօբին չար տղայ չէ, վատ չէ։ Տօբին աղօթք կանէ մասսայի համար. մի փոքը առաջ խոստացաւ նա այդ Մալիին։ Ողորմութիւն, մնասա, ողորմութիւն։

Էդուարդը պատասխանեց Մալիի աղերսալի աղաչանքին մի աքացի տալով նրեսին և մի հարուած մտրակով։ Մի քանի անգամ էլ կոյր կոյր խփեց նա դէս ու դէն, թռաւ կառքի մէջ ու հրամայեց. Դնացէք բանիանների տակ։

Այս երկու գետին ձգած փոքը տղրուկները իսկոյն վեր թռան, սրբեցին արիւնը երեսներից, լծւեցան կառքի մէջ ու քաշեցին։

—Շուտ, կանչեց Էդուարդը մտրակը թրխկացնելով։ Դուք չէք վազում, այլ սողում էք։ Շուտ, աւելի շուտ։

Մի քանի ուժեղ հարուածներ բազմակապ մտրակով, որոնք շրխկացին տղերանց ականջներին, զօրութիւն տւին նրա խօսքերին։ Տօբին և Մալին շաապեցրին քայլերը և վազում էին այնպէս շուտ, ինչպէս որ միայն կարող էին, դէպի Բանիանի անտառիկը, որ պարտիզի ծայրին էր։ Արեգակը սաստիկ այրում էր նրանց. ճանապարհը գնում էր դարի-դուս դարի-վայր, և շուտով բոլորովին նւաղեցաւ տղերանց ոյժը։ Նրանց կուրծքերը հեծում էին, քրտինքը աղբիւրի պէս թափւում էր ճակատներից և էլի ստիպում էր Էդուարդը աւելի արագ վազել։

—Ես էլ չեմ կարող, վերջապէս կամաց ասաց Տօբին իր ուտաբաղդութեան ընկերին։ Անգութ մասսան այնպէս ծեծեց ինձ, որ էլ ամենևին ոյժ չունեմ։ Կամաց գնա, Մալի։

—Ո՛չ, ոչ, շուտ, թէ չէ մասսան էլի կծեծէ քեզ, պատասխանեց Նեգրը։ Դու միայն կողքիս վազիր, Տօբի։ Ես բաւական ոյժ ունեմ կառքը մենակ քաշելու, և Բանիանն էլ շատ հեռու չէ։ Շուտ, առաջ, Տօբի։

Տօբին չանք էր անում, ինչքան կարող էր, բայց արիւնի կորուստը, իրաւ որ բոլորովին թուլացրել էր նրան, և թէպէտ Մալին մենակ էր քաշում կառքը, բայց Տօբին հետը գնալ էլ չէր կարողանում։ Մի հարիւր քայլ անելուց յետոյ չոքեց նա և վայր ընկաւ գետնին։ Էդուարդը աղաղակեց բարձր ձայնով, բայց Մալին էլ ժամանակ չը աւեց նրան հայհոյելու, այլ շուտ առաջ տարաւ կառքը և մի րոպէից յետոյ կանգնեց բանիաննների տերևատ-կամարի տակ, ուր նա ծանր շունչ քաշելով սրբում էր քրտինքը

ճակատից և երկիւղալի հայեացքով նա ուժ էր դնում իր ընկեր Տօբիին։ Կամաց-կամաց եկաւ Տօբին, և ինչպէս որ հաւաստի էր, ընդունեց նրան Էդւարդը մի գունդ հայհոյական խօսքերով։ Համբերութեամբ լսեց Տօբին և լուռ կանգնեց Մալիի մօտ, մինչև Էդւարդը դուրս թռաւ կառքից և մի ահագին ծառի բնի մօտ շինած մամուխ նստարանի վրայ գլորուեցաւ և կարճ հրամայեց.—Հով փչեցէք։

Տօբին և Մալին բերին կառքից երկու հատ ճանճվան, կանգնեցան իրանց փոքր հրամայողի աջ ու ձախ կողմը և հով էին փչում և միևնոյն ժամանակ քշում էին նրանից անթիւ խայթող միջատները, որ ոչ մի մօսկէտօ (մոծակ) չը վնասէ փոքր մասայի կաշին։ Իսկ իրանք միևնոյն ժամանակ սաստիկ ծակոտւում էին մոծակներից ու ճանճերից, որոնք մանաւանդ նստում էին Տօբիի նոր արիւնոտ վէրքերի վրայ։ Բայց դրա մասին ամենևին չէր մտածում փոքր մասան, որ ծոյլ հանդարտութեամբ ձգձգւում էր կակուղ մամուխ անկողնի վրայ և վերջապէս—որովհետև ուրիշ լաւ բան չը գիտէր—քնեց։ Զը նայելով այդ բանին էլի անդադար հով էին փչում նրան Տօբին ու Մալին և միայն աչքերով էին խօսում միմեանց հետ, որովհետև նրանք կամաց շշնջիւնով անգամ չէին համարձակւում անհանգստացնել իրանց պարոնի քունը։ Մարակը կը լինէր անշուշտ այդպիսի անարգանքի պատիժը։ Մոայլ ատելութեամբ նայում էր Տօբին Էդւարդի վրայ, այն ինչ Մալին հեզ ու աղերսալի ձևերով աշխատում էր, որքան կարելի էր, մեղմացնել իր ընկերի բարկութիւնը։

Մէկ ժամից յետոյ զարթնեց Էդւարդը և յօրանջելով ձգձգում էր իր անդամները։

—Բաւական է, ասաց նա։ Ինչպէս ձանձրալի է—կպէք։

—Ա՛խ, մասսա, աղաչում էր Մալին։ Թեղճ Տօբին բոլորովին ջարդւած է ու վիրաւորւած, այսօր կարող չէ կպչել։ Թէ Աստւած կը սիրէք, այսօր թողէք մնայ այդ բանը։

—Կպէք, կրկնեց Էդւարդը սաստիկ ձայնով, և վայ քեզ, Մալի, եթէ դու կը խնայես նրան։ Ես քեզ ականջներովդ կը մեխեմ ծառի վրայ։ Իսկ եթէ դու նրան տակդ կը ձգես, Մալի, և լաւ կը ջարդես, այն ժամանակ ազատ կը լինես այսօր ճաշից յետոյ։ Վրայ ընկիր, Մալի, վրայ ընկիր։

Տօբին ու Մալին գնացին մի կողմը, հանեցին իրանց կարմիր բաճկոնները և կիսամերկ կանգնեցան իրար դէմ։ Մալին շատ տխուր էր, բայց Տօբիի աչքերը փայլում էին ուրախութիւնից։

—Խփիր, Մալի, կամաց ասաց նա իր սև ընկերի ականջին,

մի խնայիր ինձ, ես ուրախութեամբ կը ծեծուեմ քեզանից և կուրախանամ, եթէ դու կարող ես ազատ վազվզել ճաշից յետոյ։

—Ո՛չ, Մալին այդ կարող չէ անել, պատասխանեց սևը։ Դու արդէն բաւական ծեծուած ես։ Մալին չէ ուզում ազատ լինել քեզ ծեծելով։ Դու ինձ ծեծիր, Տօբին, գլխիս խփիր, պինդ, Մալիի գլխի ոսկորը հաստ է, չէ ցաւում, այն ժամանակ ազատ կը լինես դու և կարող ես խնամել քեզ։

—Դու յիմար ես, ասաց Տօբին։ Բայց դու միայն սկսիր, յետոյ բանը ինքն իրան կերթայ։

—Դէհ, շուտ կը լինի՛, անղգաստներ, կանչեց էդուարդը անհամբերութեամբ։ Վրայ ընկիր, Մալի, վրայ ընկիր։

—Վրայ ընկիր, Մալի, ձայն տուեց Տօբին էլ կամաց։ Լաւ բռնիր, Մալի, թէ չէ այնպէս կը ջարդեմ գլուխդ, որ դու քո օրումը չես մոռանայ ինձ։

Եւ ինչպէս մի վագր վազեց Տօբին իր սև ընկերի վրայ, փաթաթեց ձեռներով և աշխատում էր վայր ձգել նրան։ Մալին թոյլ էր պաշտպանում իրան, չը նայելով էդուարդի սպառնալիքներին, և Տօբին կարող էր շատ հեշտ յաղթել նրան, եթէ այդ նրա դիտաւորութիւնը լինէր։ Բայց նրա դիտաւորութիւնն այն էր, որ բարկացնէ Մալինին, որպէս զի սա ուժով յարձակուի նրա վրայ և պինդ ծեծէ, և այդպիսով ճարէ իր համար մի քանի ազատ ժամեր։ Իսկ նրա համար բոլորը մէկ էր, մի քանի հարուած աւելի կամ պակաս ստանար, որովհետև էդուարդը արդէն սովորեցրել էր նրան ծեծին։

—Խփիր, է, կամաց ասաց Տօբին Մալիի ականջին։

Մալին գլուխը շարժեց։

—Ուրեմն ահա քեզ, յիմար սևամորթ, կանչեց Տօբին կատաղած և պինդ կոխեց Մալիի ոտքը, որ, ինչպէս նա լաւ գիտէր, Մալիի ամենազգալի տեղն էր։

Մալին դողաց։

—Այդ լաւ չէ, ասաց նա։ Ինչի՞ գլխիս չես խփում, թէ ասացի քեզ։

—Ի՞նչ, ապա հիմա լաւ ծեծ կուտես, որովհետև այդպէս յիմար ես, պատասխանեց Տօբին և շարունակեց պինդ ծեծել։

Բայց այժմ Մալին էլ չարացաւ և տալիս էր հարուածը հարուածի տակից։ Կռիւը տաքացաւ։ տղերքը կպչում էին, լարելով իրանց բոլոր ոյժը, հրում էին միմեանց դէս ու դէն, վայր էին ընկնում, նորից էլի վեր էին թռչում, մի խօսքով էլ ամենևին չէին խնայում միմեանց։ Էդուարդը ծիծաղում ու խնդում էր այս

կամակոր կուչին նայելով և մի և նոյն ժամանակ գրգռում էր Մալիին քաջալերական խօսքեր ասելով։

—Տուր նրան, Մալի, տուր նրան, պինդ, գոռում էր նա։ Հա, այդպէս։ Քթէն, Մալի, քթէն, պինդ, հա, այդպէս։ Ահա, չասացի, որ դու կը յաղթես նրան։

Իրաւ որ կռիւը վերջացաւ։ Տօբին յաղթած ընկած էր գետնին և հեծում էր, բայց մի և նոյն ժամանակ ուրախ ժպտում էր իր ընկեր Մալիի երեսին և կամաց ասաց.

—Ա՛յ, այդպէս լաւ է Մալի։ Դու ինձ լաւ ջարդեցիր և հիմա ճաշից յետոյ ազատ կը լինես։

Զարհուրած վեր թռաւ Մալին։ Կուի տաք ժամանակ բոլորովին մոռացել էր, որ ուզում էր խնայել իր խեղճ ընկերին և հիմա յանկարծ տեսաւ, որ Տօբին գիտութեամբ էր բարկացրել նրան։

—Ո՛հ, Աստուած, ասաց նա։ Մալին վատ տղայ է, ծեծեց խեղճ Տօբիին։ Ո՛հ, ոհ։

Տօբին տխուր դէմք ընդունեց և այնպէս էր ցոյց տալիս, կարծես թէ սաստիկ ցաւեր էր կրում, և այդ բանը աւելի զօրացրեց Մալիի անկեղծ կարեկցութիւնը։ Իսկ Էդւարդը մի և նոյն ժամանակ ուրախանում էր կատարեալ չարախնդութեամբ։

—Այդպէս լաւ է, Մալի, ասաց նա սև տղային։ «Դու քո բանը լաւ բռնեցիր և դրա համար պիտի վարձատրուես։ Բայց հիմա բաւական է։ Հագէք ձեր բաճկոնները և տուն տարէք ինձ,

Տղուկները հնազանդեցան և վազեցին հարթ աւազոտ ճանապարհով դէպի տուն։ Էդւարդը շատ չէր քշում նրանց, որովհետև մտածում էր մի բանի վրայ, որ սաստիկ պիտի վիրաւորէր Տօբիի սիրտը։ Երբ որ տուն հասան, բաւականացած ցած թռաւ կառքից և չարութեամբ ժպտելով, ասաց. հիմա կամենում եմ կատարել եմ խոստումնքը, Մալի։ Ես խոստացայ քեզ ազատութիւն ճաշից յետոյ, և դու ազատ կը լինես, իսկ Տօբին պիտի փակւի շներէ ախոռում և դու կը լինես նրա պահապանը։ Այն ժամանակ դու ազատ կը լինես, իսկ նա բանտի մէջ։

Շփոթած նայեցին Տօբին ու Մալին միմեանց. իսկ Էդւարդը բարձր ձայնով ծիծաղելով մտաւ տուն, որի դռները շուտ փակեց իր եետից։

—Ի՞նչ գարշելի խաբեբայ է, կանչեց Տօբին կարճ ժամանակից յետոյ և բարկացած ու կատաղութեամբ պտոյտ էր տալիս աչքերը։ Բայց համբերութիւն, մէկ անգամ էլ ինձ կընկնի հերթը, և այն ժամանակ վայ նրան։

Մալին տխուր շարժեց գլուխը և արտասուքը սրբեց աչքերից։

—Ինձ Տօբի, ասաց նա։ Առաջ ծեծուեցար, ոտնակոխ եղար, հայհոյուեցար, ջարդուեցար և հիմա պիտի փակուես շների քնի մէջ, շուն գազանների մօտ։ Ա՛խ, Տօբի, լաւ է թէ նրանք չը կծոտեն ու չը պատառեն քեզ։

—Ո՛չ, մի՛ վախենար, Մալի, պատասխանեց Տօբին դառը ժպիտով։ Այն կատաղի շուն գազանները այնպէս վատ չեն, ինչպէս մասսան, որ աւելի վատ է, քան թէ վագրը ու շնագայլը։ Բայց համբերութիւն. ինձ էլ կընկնի հերթը։

Բարկացած և տրտում յարկի տակ քաշեցին երկու փոքր տրուկները փոքր մասսայի կառքը և յետոյ համբերութեամբ գնացին իրանց տեղը, որովհետև լաւ գիտէին, որ աւելի խիստ պատիժ կը հասնէր իրանց, եթէ համարձակուէին չը կատարել իրանց մասսայի հրամանը։ Տօբին սողաց շների ախորը, ուր կատաղի գազանները ընդունեցին նրան բարձրաձայն հաչելով ու ոռնալով. բայց նա շուտ հանդարտեցրեց նրանց։ Մալին նստեց դռան առաջ մի քարի վրայ և այդպէս վայելում էր իրան խոստացած ազատութիւնը։ Բայց բաղդը այն էր, որ տղերքը կարող էին խօսել միմեանց հետ, որովհետև դռան մէջ օդածակեր կային, որոնց նրանք այժմ գործ էին ածում միմեանց հետ խօսելու համար։ Միայն երեկոյեան կարող էին նրանք հեռանալ այդտեղից և գնալ իրանց խրճիթը, որի մէջ միասին էին ընակւում։ Տխուր սրտով պառկեց Մալին իր անկողնի մէջ, բայց Տօբին լի էր բարկութեամբ և մինչև անգամ քնի մէջ էլ մրթմրթում էր։

—Միայն համբերութիւն։ Մէկ օր էլ ինձ կընկնի հերթը։

ՍՐՄՐԱՏ

Ս. Էջմիածնի Հայրապետական Ամրոի պաշտօնական ամսագիր

Կրօնական, մանկավարժական եւ գրական

Բաժանորդագինը 4 ր., արտասահման 5 ր։

Հասցէն՝ Св. Эчміадзин. Ред. жур. „*Арарат*“

Etchmiadzine. Rédaction de la Revue „Ararat“.

III ՏԱՐԻ

ԱՐՕՐ

III ՏԱՐԻ

Գրական-գիտագիտական, փիլիսական Հասարակական և խաղաղասիրական ամսագիր

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Յաւելած-պրէմիայով, ստար և ուշադրաւ աշխատասիրութիւն Հ. Առաքելեանի, I հ. բաժանորդագինը 6 ր., Մէկ օրինակների համար 4 ր։

Հասցէն՝ Тифлис. Ред. жур. „*Арор*“

Tiflis. Rèdaction de la Revue „Aror“

Խմբ.-հրատ. Հ. Առաքելեան

XI ՏԱՐԻ

БАКУ

XI ГОД.

Ежеднев. литератур.-политич.-обществ. газета.

Ежедневно спец. телеграммы от собствен. корреспондентов из всѣх концов Россіи и загран. Спец. отдѣл армян., мусульман. и грузин. жизни. Обзор столич. и мѣст. печати. Трибуна обществ. мнѣнія. Нефтяной отдѣл.

Годовая плата в Баку 7 р., с перссыл. в др. города 8 р.—50 к. заграницу 15 р.

Адрес: Ред. газ. „БАКУ.“

Ред.-изд. Х. Вермишев

VI ՏԱՐԻ

ԱԽՈՒՐԵԱՆ

VI ՏԱՐԻ

Գրական-Հասարակական օրաթերթ

Խմբագրութեան անդամներն են՝ Ատրպետ, Գեղամ Արմէն, Վ. Բաբայեան, Ե. Տէր-Մինասեան և Ա. Տիգրանեան.

Բաժանորդագինը՝ Ալէքսանդրապոլում 2 ր., ուրիշ քաղաքներ 3 ր., արտասահմ. 12 ֆռ.։

Հասցէն՝ Александрополь. Ред. „*Ахурьян*“

Խմբ.-հրատ. Կար. Ափիճեան

IV ՏԱՐԻ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

IV ՏԱՐԻ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ «Առողջապահիկ» յաւելուածով։

Տարեկան բաժանորդագինը 4 ր., արտասահմ. 5 ր.։

Հասցէն՝ Тифлис. Ред. „*Гюгатнтесс*“. Tiflis. Réd. du journal „Gugatntess“.

Խմբ.-հրատ. Ա.ս. Արամեանեան

IV ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

IV ՏԱՐԻ

Գրական, հասարակ. եւ քաղաքակ. օրաթերթ

Բաժանորդագինը Ռուսաստանում 8 ր., Պարսկաստանում 10 ր., Թուրքիայում 120 դրուշ, Ամերիկայում 6 դոլար, Եւրոպայում 30 ֆր.,

Հասցէն՝ Тифлис. Ред. „Оризон“. Tiflis, Réd. „Horizon“.

Խմբ.-հրատ. Ս. Սահակեան

XLI ՏԱՐԻ

ՄԵՇԱԿ

XLI ՏԱՐԻ

Քաղաքական-Գրական լրագիր

Բաժանորդագինը՝ Ռուսաստանում և Պարսկաստանում տարին 10 ր., Ամերիկայում՝ 6 դոլար, Եւրոպ. 32 ֆր., Թուրք. 120 դր.

Հասցէն՝ Тифлис. Ред. „Мшак“. Tiflis, Réd. du journal „Mshak“.

Խմբ. Ա. Քալանթար

Հրատ. Ա. Քալանթար, Ե. Տէր-Մարկոսեան, Հ. Առաքելեան

1883 Երեսնամեակ Աղբիւրի 1912

Բացած է 1912 թ. բաժանորդագրութիւնը

XXX ՏԱՐԻ

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

XXIII ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակուում են ճոխ, բազմաբովանդակ, մանկակցութեամբ մեր և եւրոպական յայտնի գրականագէտների, մանկավարժների և արուեստագէտների:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ.

I. ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» յատկացած:

II. ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» յատկացած:

III. ԱՒՕՂՋԱՊԱՀ ամսաթերթը.

IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ V և VI պրակները.

V. ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՄԱՆԱԽ 1913 թ.

VI. ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ:

VII. ԿՐՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳԻՒՂՈՒՄ, բազմադրոյն հրաշափառ պատկեր, պատրաստած ե. բոզաջեանի:

VIII. Հայոց ապագայ ՎԵՀԱՓԱՌ ԿԱՓՈՂՔՈՒՈՒ մեծադիր պատկերը:

IX. MONA LISA (Ջիոկոնդա) Լեւոնարդօ Տա-Վինչիի ստեղծած տիեզերահռչակ հիասքանչ նկարի խոշոր պատճէնը, հոյակապ գոյն ամէնամաքրութեամբ վերարտադրուած:

X. Մեծն Նաբոլէօն I և հոյց Լևոն վերջին թագաւորը:

XI. Նապոլէօն Բոնապարտի մանկութիւնը պատկերներով:

XII. ԵՐԻՒՆԱՄԵԱՆՑ ԱՂԲԻՒՐԸ, soupenir:

Այս քսակի տարեկան բաժանորդագինը 10 ր., արտասահմ. 18 ր. կամ 50 ֆր.

Պարտքային պայմանները

Աղբիւրը տարեկան 2 ր. Առանց յատկացեալների 1 ր.

ԱՂԲԻՒՐ և ԱՒՕՂՋԱՊԱՀ տարեկան 3 ր.

ՍՂԲԻՒՐ, ԱՒՕՂՋԱՊԱՀ և ՏԱՐԱԶ առանց յատկացեալների, պրէմիաների և Թատրոն երաժշտութեան՝ տարեկան 4 ր.

Աղբիւր, Առողջապահ, Տարազ, *ընդոր յատկացեալներով եւ պրէմիաներով* 5 ր. (արտասահման 10 ր.)

Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունուում:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮР“ կամ „ТАРАЗ“.
Tiflis, (Caucase) Direction Agbür կամ Taraz.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.